ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՏԵՐՅԱՆԱՇՈՒՆՉ ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

(Էսսե)

Ով խաղաղ սրտով մտնում է շիրիմ,
Բյուր հազար անգամ երանի նրան:
Վահան Տերյան

Տերյանի ցավը՝ սեր, սերը՝ ցավ: Սիրո կերպով է նրա փառապանքն էլ: Այս երեքը՝ ցավը, սերը, փառապանքը, այնքան միասնական են, որ դժվար է, գրեթե անհնար սահմանազատելը: Այս եռամիասնությամբ զորանում եւ գնում է ինքնազոհության:

Սիրո եւ ինքնազոհության պատրաստ լինելու նշաններից է հայ մարդու շուրթին հայտնված «Ցավդ տանեմ» արտահայտությունը: Առանց զոհաբերության կատարյալ սեր լինել չի կարող: Սիրել, ասել է՝ զոհաբերել: Զոհաբերությամբ հայտընվում է սերը: Մարդացյալ Աստված՝ Հիսուս Քրիստոսն ինքը զոհ է, զոհաբերության եւ փրկության խորհրդով է: Գողգոթա ասվածը, որքան էլ փառապանքի պատկերն ունենա, էությամբ սիրո, օրհնության եւ անմահության ճանապարհ է: Առանց չարչարանքի ոչ միայն կատարյալ սեր, այլեւ հավատ լինել չի կարող:

Տերյանը ցավի, սիրո, հավատի եւ հավիտենության շաղախով հայտնում է. «Ես փառապանքս բախտ եմ համարում»: Այս փառապանքի մեջ ոչ այնքան կյանքի ճշմարտություն, որքան գթասրտություն կա: Արդարություն փնտրելով եւ արդարություն գործելով՝ նա վեր է կանգնում սովորական մարդուց, մարդ-գրողից. «Արդարություն չկա երկրում», ասել է թե՝ աստվածայինը բացակա է: Խոսքը վերաբերում է աստվածճանաչությանը եւ ոչ թե արդարությանը, որ օրենքով է:

Ինչպես այս աշխարհի հոգեւոր մյուս մեծերը, այսինքն՝ հոգու դասին պատկանողները, այնպես էլ Վահան Տերյանն իր էությամբ շարունակվող երեւույթ է, շարունակվող կյանք ու կյանքի խոսք: Եւ եթե փորձելու լինես գտնել նրա սկիզբը, կդժվարանաս, քանի որ նա այնպես է սկսվում, կարծես չի սկսվում եւ այնպես է ավարտվում, կարծես չի ավարտվում: Որպես այս աշխարհի ճամփորդ, ճամփի ավարտ չունի: Նարեկացիական էություն է՝ ընթացող, բայց չհասնող: Նման է ուխտավորի, բայց թե ե՞րբ եւ որտեղի՞ց է ձգվում ճամփան, դժվար է ասել: Ինչու՞: Որովհետեւ անձի մեջ ազգի մարմնավորումն է:

Թե՛ որպես մարմնավոր եւ թե՛ որպես հոգեւոր, անհանգրվան է: Տերյանինը հայտնությունների կյանք է, որքան առաջընթացի, նույնքան եւ վերադարձի կյանք. վերադարձ դեպի ժառանգության երկիրը, որ Նաիրին է, վերադարձ դեպի ծննդյան վայրը, որ Ջավախքն է: Վերադառնում է հոգով, վերադառնում է մարմնով: Տերյան մարմնավորը հետեւում է Տերյան հոգեւորին: Եւ այն ամենը, որ կապված է Ջավախք աշխարհի հետ, ընդհանրական է, այսինքն՝ հավասար չափով վերաբերում է Հայաստանին ու հայ ժողովրդին:

* * *

Տառապագին կյանք ապրած Տերյանը, ի դեպ, երբեք ոչ մեկի հասցեին անեծքի խոսք չի մրմնջում, մեղավորներ չի փնտրում: Խարազանն ուղղում է ինքն իրեն. «Մի օր առհավետ կյանքս կանիծեմ»: Խոսքը վերաբերում է աշխարհական կյանքին: Մարմինը երբեմն-երբեմն, առիթից առիթ խոսեցնում է նույնիսկ հոգեւոր մարդուն: Հոգին, որ հաստատված է վերստին ծնունդ ստացած մարդու ներսում, երբեք իր իշխանությունը չի զիջի մարմնին: Տերյան հոգեւորն, ուրեմն ոչ մեղադրում է եւ ոչ էլ մանավանդ ատում մարդ մարմնավորին, որ նույն մարդ շնչավորն է: Նրա կռիվը աշխարհի հետ է, մարդու էությանը տիրած պիղծ հոգու հետ: Թուրքին անգամ չի դիտում իբրեւ թշնամի: Թրքությունն է արգահատելի եւ ոչ թե թուրք ժողովուրդը: Իսկ թրքությունը հոգու խավարն է, այլ կերպ ասած՝ անասնական բնազդը: Թեեւ գրում է «Մեզ խաչ են, խաչ են հանում ամեն օր», բայց երբեք չի մասնավորեցնում. «Սիրտդ որպես վառ ատրուշան պահիր վառ, / Չար աշխարհի խավարի դեմ պահիր վառ»: Իսկ չար աշխարհի խավարը ոչ թե մի տեղ, մի երկրում է տեսնում, այլ ամենուր: Որպես քրիստոնյա՝ ոչ մեկին չի դատապարտում, անուններ չի տալիս. «Թող գուժկան գիշերն անհաստատ դավե, /Որքան մութը սեւ, այնքան ես համառ»: Պարզ երեւում է՝ կռիվը լույսի եւ խավարի միջեւ է, հոգու եւ մարմնի միջեւ, աստվածայինի եւ անաստվածության միջեւ, հավատի եւ անհավատության միջեւ. «Երկնի՛ր, իմ երկիր, հավատով անմար, /Սուրբ է քո ուղին եւ պսակդ՝ վեհ»: Երկունքն իր մեջ ցավ, տառապանք, ծնունդ եւ հայտնություն ունի: Երկիր Նահիրին է, որ աստվածային ընթացքով, սուրբ ուղիով, քրիստոսակերպ պիտի ծնվի եւ հայտնվի:

* * *

Դատապարտելուց հետո Տերյանը նայում է ինքն իր ներսը, որտեղ իր ազգն է, ազգի էությունը: Այն ամենը, որ հատուկ ու բնութագրական է Վահան Տերյան զավակին, հատուկ եւ բնութագրական է հայ ժողովրդին: Ազգային կերպը կրող որ ասում են, Տերյանն է: Նրա խոնարհությունն էլ է իր ազգինը, համբերությունը, հնազանդությունը, հավատն ու սերն էլ: Ազգային կոչվածը, անշուշտ, նույն աստվածայինն է. «Սուրբ է քո ուղին եւ պսակդ՝ վեհ»: Այս պսակն էլ հարության եւ հավերժության խորհրդով է:

Տերյանն իր երկիր-ժողովուրդը տեսնում է Լույսի մեջ («Լուսե՛ղ, քեզ եմ երազում») եւ նույն պահին Լույսը տեսնում է երկիր-ժողովրդի էության խորանում. «Տաճար է մեր երկիրը...սուրբ է ամեն քար»: Ասացի՝ տեսնում է Լույսը, կարող էի եւ ասել՝ տեսնում է Աստծուն: Աստծո ներկայությունն է նրա տեսիլքը: Ուրեմն, նա սովորական ճամփորդ չէ, այսինքն՝ իր մարմնի ցանկության հետեւից գնացող չէ. «Ուխտավոր անդուլ, դարերի ժառանգ/ Մի հեգ նահրցի՝ գնում եմ անկանգ»: Ուխտավորն, անկասկած, հայ ժողովուրդն է. սուրբ տառապանքն է, որ ոչ միայն կերպարանակից, այլեւ չարչարանակից է դարձնում Քրիստոսին: Այն, որ գրում է. «Մեզ խաչ են, խաչ են հանում ամեն օր» եւ այնուհետեւ. «Հարյավ հոգին իմ, հավետ հարյավ»,

Քրիստոս-կյանքի վկայություններն են:

Մեր վարքը պիտի խոսի մեր քրիստոնյա լինելու մասին: Քրիստոս՝-ճառագայթը կրելով, Քրիստոս-կյանքն ապրելով ենք քրիստոնյա: Եվ այնքանով, որքանով ապրում ենք Քրիստոս-կյանքը, վկաներն ենք Քրիստոսի. «Դու յոթնապատիկ խոցված Տիրամայր»: Այս «Դու»-ն հայ ժողովուրդն է: Այնպես որ, Տերյանինը վկայություն է եւ ոչ թե, ասենք, ստեղծագործություն: Ինչու չէ, բանաստեղծությամբ էլ կարելի է վկայել: Խնդիրը ձեւը չէ, խնդիրը բովանդակությունն է: Թումանյանի ասած՝ «Ձեւը խաղ է անցավոր»: Ձեւը երեւացող կողմն է, իսկ Տերյանի հայացքը դեպի անեւրեւույթն է, դեպի անտեսանելին, այսինքն՝ դեպի հավիտենականը: Այն, որ երեւում է, այն, որ տեսանելի է մարմնի աչքին, ժամանակավոր է, այսինքն՝ մեռնող, իսկ այն, որ չի երեւում՝ անմահ:

* * *

Հիրավի, Քրիստոսին վկայող ժողովուրդ ենք թե՛ լինելությամբ եւ թե՛ մեր մահով ու հարությամբ: Զոհաբերությունը մեր ժողովրդի կյանքում հարատեւության ճամփա է եղել ի սկզբանե: Մեզ դիտում են որպես մոխիրներից հառնող ժողովուրդ: Մոխիր կոչվածն էլ վկայություն է մինչեւ վերջ այրվելու. «Որքան մութը սեւ, այնքան ես համառ»:

Թող կիտվի խավարն ավելի խրթին,
Եվ չարխինդ ճնշե հողն իմ արյունոտ,
Ու թող գա՛, թե կա, ավելի՛ չար բոթ,
Մեխվի զոհ-երկրիս անարգված սրտին:

Երբ սա կարդում ես, իսկույն տեսնում ես թե՛ մեխը, թե՛ Խաչափայտ-Խաչը եւ թե՛ Խաչյալը:

Ահա այս ու այսպես է հայ ազգի Քրիստոս-կերպը, Քրիստոս-կյանքը: Նման վկայությունը կարող ենք տեսնել թե՛ հայ ժողովրդի պատմության քառուղիներում, թե՛ առօրյայում: Մի ծեր կին խոնարհության ցավով պատմում էր, թե ինչպես 1915-ի սեւ օրերին թուրքերը զոհին նախ լրիվ մերկացնում, խոցում եւ ապա սպանում էին: Նա վկայում է նաեւ, որ զոհի շորերը բաժանել են: Անշուշտ, նրբահյուս պատմուճանի հանդիպելիս վիճակ էին զցել: Էական ոչ մի տարբերություն ցեղասպան թուրքերի եւ Քրիստոսին խաչ հանողների միջեւ: «Մեզ խաչ են, խաչ են հանում ամեն օր»: Իսկ խաչ հանելու, այն է՝ մահվան դատապարտելու զանազան ձեւեր կան: Հրեաներին, օրինակ, ֆաշիստները գազախցիկ էին զցում: Այսինքն՝ հրեաներին սպանում էին տեղում, անմիջապես: Մինչդեռ թուրքերը գործում էին նենգության ճանապարհով. անպաշտպան մնացած հայ կանանց, երեխաներին, ծերերին, տեղահանում էին խաբեությամբ, անապատ քշում, տանջամահ անում: Թուրքերը անասնական բնազդներով հակված էին մարմինը լլկելուն, հոշոտելուն:

Ֆաշիստները հոգի եւ թալանի խնդիր չունեին, մարմնի խնդիր եւս չունեին: Նրանց խնդիրը հրեաների հոգու, տեսակի, խելքի ու նաեւ արյան հետ էր կապված: Ֆաշիստների նպատակն իրենց եզակիությունը հաստատելն էր երկրի վրա:

Դա բանականության մթագնում էր: Մինչդեռ թուրքերինը՝ գազանային բնազդների արթնացում: Թուրքերինը մարմնի ցանկության դրդումով էր, մի բան, որ հատուկ է հեղամնաց, դեռեւս իբրեւ ազգ չկայացած ցեղին:

Երբեմն մարդիկ չեն էլ զանազանում ազգը ժողովրդից ու ցեղից: Ազգը, իբրեւ մի ամբողջական, ամփոփ կառույց-միավոր, հոգի եւ մարմին է, ցեղը՝ շունչ եւ մարմին: Ձեւավորվել իբրեւ ազգ նշանակում է ապրվածճանաչության զալ: Մահվան սարսափի սահմանն անցնելով՝ ազգը մոտենում է Աստծուն: Մեռնելու վախը արգելք է մարդու եւ Աստծու միջեւ: Մահը անդունդ է: Մարմնավորն ընկնում է այդ անդունդը, հոգեւորը՝ թռիչք է գործում անդունդի վրայով: Այս ու այստեղ է, ասենք, Վահան Տերյանի տարբերությունը մյուս գրողներից: Այս ու այստեղ է նաեւ հայ ժողովրդի տարբերությունը մյուս ժողովուրդներից. «Մի խառնեք մեզ ձեր վայրի, արջի ցեղերին»: Աստվածաշնչյան լեզվով ասած՝ ի՞նչ ընդհանուր բան ունի հավատի մարդն անհավատի հետ: Մարմնավոր մտածողությամբ հոգու բանը քննել կլինի՞: Իհարկե ո՛չ: Ահա թե ինչու ժամանակակիցներից շատերը Տերյանին չհասկացան, գրական հսկային գրական դաշտում որպես «բլուր» դիտեցին, նրան դուրս դրին նույնիսկ ազգային էությունից, որպես այլախոհ տեսան: Ինչո՞ւ: Որովհետեւ Տերյանը չէր շլանում անցյալով, վեր էր կանգնած գրից ու գրչից, բառերի հետ խաղ անելուց, Տերյանինը արհեստավարժություն չէր. երբ մեկը, ասենք, ստեղծագործություն է դարձնում մոր մահը, իր իսկ գրով, իր իսկ գրչով մեկ անգամ եւս սպանում է մորը: Ըստ Աստծո խոսքի՝ գիրը սպանում է, հոգին՝ կենդանացնում: Գիրը ստեղծագործություն կոչվածն է: Նարեկացու «Մատյանը», օրինակ, ստեղծագործություն չէ: Նարեկացին լսում է Սուրբ Հոգու ներգործությամբ: Սայաթ-Նովան, Ջիվանին նույն լսողությամբ երգում են, Տերյանը՝ վկայում: Տերյանը հոգու ականջի լսողությամբ եւ հոգու աչքի տեսողությամբ է գրում: Վահան Տերյան հոգին թեեւ խոսում է երկրում, բայց շարունակ իրեն զգում է երկնքում, քանի որ երկնքինն է երկիր բերում. «Մեր հին հոգին՝ համր ու մոլոր, /Ահ՛, եւ անզոր, եւ անարգված»: Իսկ ինչպե՞ս հասկանալ սա: Իհարկե, Աստծուց եկածը, Աստծո շնորհածը, այն հոգին, որ ունեին Ադամն ու Եւան մինչեւ անհնազանդ գտնվելը: Այս «հինը», ուրեմն, նույն ապրվածայինն է, որ զգում, պահում եւ կյանքի է կոչում Վահան Տերյան զավակը: Իսկ ի՞նչ է նշանակում «համր ու մոլոր»-ը: Համր ու մոլոր լինելը հատուկ է գառանը, այսինքն՝ զոհին: Հովհաննես Մկրտիչը, տեսնելով Հիսուսին, Սուրբ Հոգով վկայում է. «Ահա Աստծո գառը, որ վերցնում է աշխարհի մեղքը»: Ճիշտ եւ ճիշտ Տերյանի գրեթե ամեն մի արտահայտությունը մեզ կապում է Քրիստոսի կյանքի հետ, բացահայտում մեր քրիստոսակերպ, այն է՝ քրիստոնյա լինելը: Մենք Քրիստոսով ենք քրիստոնյա: Աստծո հետ մեր կապ-հաղորդակցությունը Քրիստոսով է: Քրիստոսի եղբայրությամբ ենք Աստծո զավակներ:

Տերյանն իր պահվածքով է Տերյան: Երբեք չի ասում, չի բարձրաձայնում նույնիսկ իր բանաստեղծ լինելը: Քրիստոնեությունից էլ չի խոսում: Վահան Տերյան զավակի խոսք-խոնարհությունը, որ հատուկ է Քրիստոսի էությունը կրող ժողովրդին, ավելին է, քան կարող են բառերն արտահայտել: Տերյանի բառն իսկ վերերկրային բնություն-բնավորություն է, Տերյանի բառը պիտի բացես, որ լույսը հորդի, եւ

տեսնես, թե ինչ հոգի եւ ինչ մարմին կա ներսում: Մահվան պահին իսկ մահի անունը չի տալիս, չի ասում՝ մեռնում եմ: Ասեր՝ կհասպատեր մահը: «Ընկնում եմ»: Այս էր նրա վերջին արտահայտությունը: Ինչ խոսք, ընկնում է մարմինը: Հոգին ընկնել չունի: Վկայում են, որ Արամ Խաչատրյանն այս աշխարհից մեկնելիս նույն զգացումն է ունեցել՝ ասելով. «Իսկ ինչո՞ւ չեմ ընկնում»: Դարձյալ խոսքը վերաբերում է մարմնին, այլ կերպ ասած՝ ավելորդին: Արամ Խաչատրյան հոգին, ինչպես վկայում է նրա բուժող բժիշկը, շատ հանգիստ է տարել մարմնի ընկնել-ավարտվելը՝ համարելով այն միանգամայն բնական եւ ոչ երբեք սարսափելի: Երկնքի հնչյունները երկրում ընդունած հոգին իր հարցումով պարզապես ժխտել են մահը. «Իսկ ինչո՞ւ չեմ ընկնում»: Պատահական չէ, որ Տերյանը պատգամում էր. «Իմ գերեզմանին դուք չմոտենաք, հարկավոր չեն ինձ ո՛չ ծաղիկ, ո՛չ սուգ»: Խռովության նշա՞ն է սա: Բոլորովին: Վահան Տերյան հոգին պարզապես չի ուզում ճանաչել եւ ընդունել մահվան իշխանությունը: Չէ՞ որ ծաղիկն ու սուգը եւս մահը հաստատելու եւ մարդու կյանքը վերջացած համարելու նշաններ են: Երկրային, մարմնական մտածողության տեր մարդու համար գերեզմանը մահվան հաստատության նշան է: Երբ հարազատիդ գերեզմանում ես տեսնում, գերեզմանին այցի գնալով ես փնտրում, մեկ անգամ եւս վկայում ես նրա հավիտենական մահը: Հիշել նշանակում է հաշտվել տվյալ անձի մեռած լինելու հետ: Ուրեմն, ոչ թե հիշողություն դարձնել, այլ խոսել հարազատի հետ, լսել նրա հոգու ձայնը, հոգու կանչը, հոգու հորդորը: Ինչ եք կարծում՝ Վահան Տերյանը հիշողությո՞ւն է, թե՞ կյանք, որ հավիտենական է: Վահան Տերյանին հիշելո՞վ ապրենք, թե՞ նրա էությունը, նրա երազը, նրա երգը, նրա ցավ-սերը, նրա հույս-հավատը մեր մեջ կրելով: Հիշողությունը, անշուշտ, ժամանակավոր կյանք է, այսինքն՝ անցողիկ է: Հիշողության դաշտն էլ առջեւում պիտի տեսնել. «Թող ինձ չհիշեն, թող ինձ մոռանան»: Նույնն է, թե Տերյանն ասեր. «Թող ինձ մեռած չհամարեն, թող ինձ գերեզմանում չփնտրեն», «Հարյավ հոգին իմ, հավետ հարյավ»: Այս միտք-զգացումը մեկ այլ ձեւակերպմամբ արտահայտել է Հ. Սահյանը. «Ինձ բացակա չդնեք»: Իհարկե, առօրյա կյանքում, ժողովրդի հավիտենական երթի մեջ:

Տերյանի ոչ միայն մտածողությունը, այլեւ նրա հավատի եւ հոգու շարժման ընթացքն աստվածաշնչյան է: Աստվածաշնչում Աստծո ժողովուրդը գնում է դեպի Երկիր Ավետյաց: Իսկ հայ ժողովրդի ժառանգության երկիրը Նաիրին է: Տերյանի հոգեւոր Հայաստանը, Նաիրին է: Նա իրեն տեսնում է որպես ժառանգորդ, տեսնում է որպես փիեզերքի, ասել է թե՝ երկնքի քաղաքացի. «Ուխտավոր անդուլ, դարերի ժառանգ: /Մի հեզ նաիրցի, գնում եմ անկանգ, Թող զուժկան գիշերն անհասատատ դավե, /Որքան մութը սեւ, այնքան ես համառ»: Աստվածային տրտմությամբ եւ պարզությամբ է գրում Տերյանն այն ամենը, ինչ կապված է Նաիրի Երկրի հետ: Կարելի է ասել՝ սրանք ապաշխարության երգեր են՝ թեեւ ո՛չ խոստովանություն ունեն եւ ո՛չ էլ զղջում: Սրանք մարդուն հավիտենության տանող երգեր են: Այս հավիտենությունը նույն փրկությունն է: Նաիրյան երգերը ոչ թե հոգին մաշող, այլ հոգին փրկող են, որովհետեւ բխումն աստվածաշնչյան ակունքից է: «Երկիր Նաիրի» շարքի տրտմությունը ոչ միայն մարդկանց առջեւ է, այլեւ Աստծո: Տերյանը, լինե-

լով հայ ժողովրդի աստվածային էությունից ծնված զավակ, սովոր է փխրության եւ տրտմության մեջ էլ աստվածային ուրախությունը, աստվածային սերը պահելու շնորհն ունի: Եթե մեկ այլ բնույթ կրեին տրտմության այս երգերը, դրանք մահաբեր կլինեին: Ավելի պարզ ասած՝ մարմնի ցանկության հետեւից գնացող մարդու տրտմությունը մահացու է, թե՛ հոգին եւ թե մարմինը քայքայող. «Աստծո ուզած կերպով տրտմությունը ապաշխարություն է գործում փրկության համար առանց զղջալու, բայց աշխարհի տրտմությունը մահ է գործում»: Պողոս առաքյալի թղթերից է մեջբերումը:

Այնպես որ, Տերյանի «Երկիր Նաիրի» շարքը (եւ ոչ միայն դա) կարդալը հավասարազոր է Աստվածաշունչ կարդալուն: Տերյանի հայերենին հատուկ է Սուրբ Հոգու հաղորդակցությունը. «Եւ հնչում է որպես աղոթք /Արքայական քո լեզուն»: Եթե այս «Արքայականին» փոխարիներ «Աստվածայինը», էապես բան չէր փոխվի, քանի որ «Արքայականը» Քրիստոս Արքայի խորհուրդն է կրում, Աստծո խորհուրդը: Իրականում «Տերյանի հայերենը» ոչ թե Տերյանինն է, այլ հայ ժողովրդինը՝ որպես Աստծո շնորհ: Տերյանն, ուրեմն, մտածում եւ խոսում է զտված, մաքրված, այն է՝ անխաթար հայերենով: Տերյանի բառերը սերմի նման են, բարեբեր հողի, այսինքն՝ հավատով լցված սրտի մեջ ընկնելիս մեկին հարյուր պտուղ են տալիս: Գիտակ մարդու սրտի մեջ ընկնելիս Տերյանի բառերն արմատ են արձակում, ծլարձակում են, աճում, ծաղկում, փարթամանում, հաստատվում են: Այդ բառերն ավելի չի լինի: Այդ բառերը հայի սրտից պոկել չի լինի: Պոկեցի՞ր, սիրտն էլ է պոկվում: Ժայռին մերված, աճած ծառը հանել կլինի՞: Չի լինի: Ճիշտ այդպես էլ Քրիստոս-վեմի վրա հիմնված, հաստատված խոսքն է, այս դեպքում՝ բանաստեղծության տեսքով հայտնված հավիտենական կյանքի խոսքը: Ինչպես որ Վահան Տերյան էությունը բնույթով երկակի է, այն է՝ մարդկային եւ աստվածային, երկրային եւ երկնային, այնպես էլ նրա բառերն են: Ունեն թե՛ դուրս եւ թե՛ ներս: Տերյանի բանաստեղծություն-բառ-խոսքին հատուկ է մաթեմատիկական ճշգրտությանը. «Սուրբ է քո ուղին եւ պսակդ՝ վեհ»: Խոսքը վերաբերում է հայ ժողովրդի ճակատագրին: Հայ ժողովրդից այն կողմ եւ այս կողմ Տերյան չկա: Նրա համար հայրենիքի արնաներկ լինելն այնքան ցավ չէ, որքան, ասենք, ժողովրդի շեղումը. «Մի խառնեք մեզ ձեր վայրի, արջի ցեղերին»: Մահը տեսնում է նա խառնվելու մեջ եւ ոչ թե տառապելու եւ նույնիսկ խաչվելու. «Մեզ խաչ են, խաչ են հանում ամեն օր»: Տերյանի տագնապը սաստկանում է, երբ նկատում է ազգի աստվածային բնույթից հեռանալը. «Մի՞թե վերջին պոետն եմ ես, /Վերջին երգիչն իմ երկրի, /Մա՞հն է արդյոք, թե՞ նինջը քեզ, /Պատել պայծառ Նաիրի»: Բնույթից շեղվելը, տեսակը կորցնելը մահացու է, մինչդեռ աստվածայինը պահելը (թեկուզ զոհաբերությունների գնով) հավիտենական կյանքի է կոչում. «Սուրբ է քո ուղին եւ պսակդ՝ վեհ»: Ահավասիկ, քրիստոնյա Հայաստանի զավակը խոսում է քրիստոնյա հայ ժողովրդի հավիտենական երթից: Ո՞ր դեպքում է ուղին սուրբ լինում. երբ այն Աստծո նախանշածն է: Սուրբ են ու անքննելի միմիայն Աստծո ճանապարհները: Աստծո ճանապարհով ընթացողն այս աշխարհի՞ց է: Իհարկե ո՛չ: Այս աշխարհում է, բայց ոչ այս աշխարհից, այլապես խաչ չէին

հանի ամեն օր. «Մեզ խաչ են, խաչ են հանում ամեն օր»: Աստծո լեզվով ու մտքով ասած՝ այս աշխարհից լինողին այս աշխարհը ոչ միայն կճանաչեր, այլեւ կսիրեր: Սա չի նշանակում, թե հայ ժողովուրդն աշխարհում սիրված չէ: Սիրված է, որովհետեւ աշխարհում էլի ժողովուրդներ եւ ժողովուրդների զավակներ կան, որոնք նույնպես այս աշխարհից չեն:

* * *

Հայտնապես գիտենք՝ այս աշխարհ եկած ամեն մարդ վկայության համար է: Ոչ միայն ամեն մարդ, այլեւ այն ամենը, որ բնական եւ տեսանելի են իբրեւ իրողություն եւ անտեսանելի, դարձյալ իբրեւ գոյություն, վկայության են կոչված. «Մի չար արեւ է այրել երկիրս»: Այս «չար արեւը» եւս վկայություն է, վկայություն սատանայական ուժի: Այնտեղ, ուր բացակա է աստվածայինը, գործում է դիվայինը: Թվացյալ այս լույս-«չար արեւը» էությամբ Աստծո հետ կապ չունի, ավելին՝ իր գոյությամբ հակառակ է Աստծուն: Ավելի պարզ ասած՝ Աստծո արարչագործությունից դուրս է: Չարը, չարարվածն է, որ գործում է շիրմայի տակ, դիմակ հագած, գործում է քողարկված: Արվեստի հետ կապ չունի, բայց հանդես է գալիս որպես արվեստ: Եւ եթե ճշմարիտ արվեստը մոտեցնում է Աստծուն, այս արվեստ համարված չարը հակառակն է գործում. մարդուն հեռացնում է Աստծուց, տանում դեպի հոգու խավարը: Տերյանի ակնարկած «չար արեւը» խավարի գործերն է խորհրդանշում:

Տերյանի հետ հաղորդակցության մեջ մտնողն, օրինակ, չի նայի հոգին խաթարող զանազան հեռուստաֆիլմերը, մարմնի ցանկության պտուղ գովազդները եւ մարդու աստվածային էությունն ապականող տեսագրությունները:

«Մի չար արեւ է այրել երկիրս»: Տերյանի այս վկայությունը տագնապ է, ահազանգ: Սա սոսկ բանաստեղծական տող չէ եւ ոչ էլ պատկերային արտահայտություն: Կարդալու, անգիր անելու եւ անցնելու համար չէ: Տերյանը գրիչ չի վերցրել սոսկ գրելու համար: Սա գրողական աշխատանքի պտուղ չէ: Հոգին բան է հայտնում քեզ: Հոգին ողբում է. «Ողբի նման են բոլոր երգերդս»:

Ողբը, որպես մարմնական արտահայտություն, անշուշտ, կործանարար է, նույնիսկ մահացու: Ողբի մեղմացում-ապաքինումը երգ դառնալն է: Տերյանը ողբը երգի է վերածել, որպեսզի սիրտը չպայթի, չդադարի բաբախելուց, երգի է վերածել, որպեսզի կյանքը շարունակվի, ազգը ապրի: Տերյանի այս ողբ-երգը եւս կատարյալ սիրո, այսինքն՝ աստվածային սիրո պտուղ է: Տերյանը գրիչ է վերցնում ոչ թե տառապանքի մեջ մնալու, տառապելու, այլ ցավելու, երկրի ցավը տանելու համար: Իսկ երկրի ցավը կարող է տանել մաքրված, աստվածաշնչյան լեզվով ասած, ապաշխարած մարդը. «Մի՛ տրտնջա ցավիդ համար, /Սիրտը մաքրող սուրբ հուր է նա»: Ասել եւ ավարտել է իր խոսքը վերջակետ է դրել թղթի վրա, մինչդեռ մեր հոգիներում այն, այսինքն՝ խոսքը, հավիտենական կյանքով ապրում է:

Տերյան կարդացել եւ մաքրվել է երեկվա սերունդը: Տերյան կարդում եւ մաքրվում է այսօրվա սերունդը: Տերյան կարդալու եւ մաքրվելու է վաղվա սերունդը: Ճիշտ այդպես հավիտենական կյանքի խոսքեր պիտի խոսես, որպեսզի հավիտե-

նական կյանք ունենաս: Արվե՞նտ համարենք սա: Չէ՛, վեր է արվեստից: Մասնագիտությո՞ն: Բնավ: Գրող-մասնագետ-պրոֆեսիոնալ կոչվածը նա է, ով վարպետաբան խոսքերով, սովորած խոսքերով է առաջնորդվում: Տերյանինը սովորովի չէ, թեեւ նրա ողջ կյանքն ուսումնառություն է: Տերյանինը հայտնություն է, հոգու հայտնություն: Տերյանինը ձեռքբերովի չէ, երազի հետ է կապված, տեսիլքի պտուղ է: Տերյանինը մեկ այլ կյանք է, ինքն էլ է վկայում. «Կյանքս, նա էլ մի լուսեղեն հեքիաթ էր»: Մտքիս դուռն ահա բացեց Տերյանի մեկ այլ տողը. «Լուսե՛ղ, քեզ եմ երազում»: «Լուսեղը» Երկիր Նաիրին է: Նրա կյանք-լուսեղեն Հեքիաթը ներամփոփումն է Երկիր Նաիրի-տեսիլք դյութականի: Միասին վերցրած՝ մեկ բնութագիր ունեն՝ ապրվածային:

Տերյանի գրեթե ամեն մի խոսք-վկայությունը կապված է Աստծո եւ ապրվածայինի հետ. «Արդարություն չկա երկրում, /Բայց կա վերին մի հիացում»: Աստծո տված շնորհնը գործում է պտղաբերությամբ: Տերյանի փնտրածը երկրային արդարությունը չէ, այն արդարությունը չէ, որ պայմանավորված է օրենքով: Պողոս առաքյալն ասում է. «Եթե արդարությունն օրենքիցն էր, ուրեմն Քրիստոսը զուր տեղը մեռավ»:

* * *

Տերյանի բանաստեղծություններում, մասնավորապես տագնապով գրած երգերում, նկատելի է արցունքի առատությունը, արցունք, որ հոսում է սրտի միջով: Թվում է, թե դրանք տրտմության երգեր են. պիտի կարդաս ու տրտմես: Բայց իրականում, իրենց էությամբ սիրո երգեր են, պիտի սիրո երգեր կոչել դրանք, քանի որ բխումով սիրուց են, այն սիրուց, որ նա ունի դեպի իր «արնաներկ հայրենիքը», դեպի իր «Յոթնապատիկ խոցված Տիրամայրը»:

Տերյանի տրտմության երգերը, որպես կատարյալ սիրո կատարյալ արտահայտություններ, իրենց բնույթով միաժամանակ ցավի դրսեւորումներ են: Իսկ այս ցավը աշխարհի համար է: Այնպես որ, Տերյանը տառապել է աշխարհի ցավով:

Երբ որ խոսում եմ Տերյանից, Թումանյանը երբեմն-երբեմն հայտնվում է ու նաեւ, որպես «տեսիլք դյութական», մշուշի միջից, ինչպես Արեւն ամպերի երամից, ելնում, բացվում է Ջավախքը.

Բարձրագահ Արուլն ու մթին սարեր
Մեջք մեջքի տված կանգնել վեհափառ,
Իրենց ուսերին, Ջավախքից էլ վեր,
Բռնած պահում են մի ուրիշ աշխարհ:

Տերյանը ոչ միայն մեջք մեջքի տվածներից է, այլեւ այդ «մի ուրիշ» աշխարհից: «Մի ուրիշ աշխարհը» հոգու աշխարհն է: Տերյանն, ուրեմն, հոգու աշխարհինն է եւ հավիտենական ժառանգորդը նրա: Տերյանը մի բան ասող եւ մեկ այլ բան գործող չէ: Երբ գրում է «Տաճար է մեր երկիրը», ինքն իրեն զգում է իր տաճար-երկրի քաղաքացի, այսինքն՝ ինքն իրեն սրբված եւ սրբացած է տեսնում: Ինքն իրեն տեսնում է տաճարի հյուսվածքում. «Սուրբ է ամեն քար»: Վահան Տերյան զավակը սուրբ քարերից մեկն է, քարեր, որոնք սրբված-սրբացած են: Իսկ ո՞ր երկիրն է սուրբ, ո՞ր

ժողովուրդը: Միմիայն Աստծո Սուրբ Հոգին կրողը, Սուրբ Հոգու հետ հաղորդակցության մեջ գտնվողը: Երկրավոր, մարմնավոր տաճարը մարդու ձեռքի գործ է, սրբատաշ քարերով է կառուցած, մինչդեռ երկնայինը, հոգեւորը անձեռակերտ տաճար-կառույց է՝ սրբված մարդկանցով: Այն, որ գրում է. «Սուրբ է ամեն քար», պիտի հասկանալ հոգին, մարդ-հոգի-հոգեւորը, սրբվածը, Աստծուն եկածը: Այս հոգի մարդը, բնականաբար, ինչպես Աստծո, այնպես էլ Աստծո մարմին-ժողովրդի աչքի առաջ է: Այնպես որ, Տերյանն այնքանով է Աստծունը, որքանով հայ ժողովրդինն է: Աստված հայ ժողովրդի հետ խոսում է Վահան Տերյան զավակի շուրթերով. «Մի խառնեք մեզ ձեր վայրի, արջի ցեղերին», այսինքն՝ կորստյան ճամփա դուրս մի եկեք. «Անհաւատների հետ այլախառն լծակից մի՛ լինիք. ի՞նչ մասնակցութիւն ունի արդարութիւնը անօրէնութեան հետ»:

Պահել ազգի աստվածային բնույթը: Նախնյաց հոգեւոր ջահը, որ ազգի աստվածատուր, աստվածաշնորհ արժեքների հանրագումարն է, փոխանցել սերունդներին: Տերյանն այդ ջահը տեսավ ժամանակակիցներ Թամանյանի եւ Իսահակյանի ձեռքին: Մարաթոնյան հոգեւոր վազքում վերցրեց ջահը, բայց ընթացքում չտեսավ նրան, ում փոխանցելու էր այն եւ այստեղից էլ ծնվեց տագնապը. «Մի՞թե վերջին պոետն եմ ես, /Վերջին երգիչն իմ երկրի»:

Սա բոլորովին չի նշանակում, թե պոետներ չեն լինելու: Լինելու են, բայց շնչավոր-մարմնավորներ, որոնք թերեւս համբավ-հեղինակություն կունենան, բայց հավիտենական կյանքի խոսքը չեն խոսի: Եւ քանի որ Տերյանը մարմնավորումն է ազգի, այս ամենից իրեն դուրս դնել չէր կարող, ավելին՝ նրա տագնապած հոգին հայտնվում է նաեւ գալիք ժամանակներում. «Դեռ կգան օրեր ավելի դժնի»:

Սա երեկվա՞ համար է ասված: Ոչ միայն: Քանի որ Տերյանը մտածողությամբ աստվածաշնչյան է, նրա խոսքի երեկը, այսօրը եւ վաղը նույնացած են իրենց հավիտենական արժեքներով: Ականջին հնչում է աստվածայինը, հայացքով, երազով գնում է դեպի Հայաստանի հոգին, այսինքն՝ դեպի հոգեւոր հայրենիքը, որը ժամանակ-տարածություն-սահման չի ճանաչում.

Վտարանդի՛, երկրում աղոտ,
Լուսե՛ղ, քեզ եմ երազում,
Եւ հնչում է որպես աղոթք
Արքայական քո լեզուն:

Երբ ասում է քո լեզուն, անշուշտ, պիտի հասկանալ՝ Աստծուց տրված լեզուն: Այս է վկայում «Արքայականը»: Հայ ժողովուրդն, ուրեմն, այնքանով կմնա ազգերի հավիտենական երթի մեջ, որքանով անաղարտ կպահի Աստծո պարգեւ լեզուն, որ հայերենն է: Տերյանով ոչ միայն լեզու-աստվածայինը անաղարտ պահելու, պահպանելու պատգամն է հնչում, այլեւ լսելի է դառնում Աստծո կանչը. «... Ե՛տ դառեք ձեր ժառանգության երկիրը եւ ժառանգեցե՛ք այն»: Իսկ եւ դառնալու համար հարկավոր է, Պողոս առաքյալի նման, հեստեւի բաներն աղբ համարել եւ միմիայն առաջ նայել ու առաջ ընթանալ: Իսկ առջեւում աստվածայինն է: Աստվածայինով առաջնորդվել եւ ոչ թե աշխարհային ավանդույթներով: Քրիստոս կյանքն ապրել եւ ոչ

թե ընդունել աշխարհի կերպը, որ կորսպական է: Աղավաղված լեզվով մտածողը գոյատեւման է ձգտում, մի բան, որ կենդանական բնազդ է: Խնդիրը հարատեւելն է: Հարատեւելու համար հարկավոր է մեկ այլ լեզու, որի անունը «Արքայական» է: Իսկ ի՞նչը եւ ո՞ւմ նկատի ունի: Իհարկե, աստվածայինը նկատի ունի: Նկատի ունի Արքաների Արքա Հիսուս Քրիստոսին: Ճիշտ այդպես քրիստոնյա հայի լեզուն Քրիստոսով է արքայական: Հայոց լեզուն, հիրավի, Աստծո հետ հաղորդակցության մեջ մտնելու միջոց է: Հայոց լեզուն Աստծո լեզու է, Աստծո մարմին ժողովրդի լեզուն:

* * *

Այսօր մեր ապրած այս Հայաստանում ամեն կերպ հաստատվում է աշխարհի ջարամիտը, մեղքի հոսք է դեպի Հայաստան, եւ դա կատարվում է զանազան միջոցներով: Լինելության խորհուրդը, անշուշտ, տեսակը պահելն է: Խառնվելը ոչ այլ ինչ է, եթե ոչ մահ: Մահաբեր է ներարկվող արյունն էլ, եթե այն մեկ այլ կարգի է:

Հայ ժողովրդի, ինչպես եւ մարդկության միակ փրկությունը ոչ այլ բանի մեջ է, եթե ոչ աստվածճանաչության: Ամեն ազգ, այդ թվում եւ մենք՝ հայերս, պարտավոր ենք իմանալ, թե ինչ է ասում Աստված. «Բայց արդեն կացինն էլ ծառերի արմատների մոտ դրած է, արդ, ամեն ծառ, որ բարի պտուղ չէ բերում, կկտրուի եւ կրակի մէջ կգցուի»: Հիշատակեմ տերյանական մի վկայություն եւս, որ նույնպես տագնապ է. «Մի ջար արեւ է այրել երկիրս»: Այս «ջար արեւ»-ը ջարության սերմն է, որ աջ ու ձախ, այս ու այն կերպերով, երեւացող եւ չերեւացող միջոցներով, արվեստի անվան տակ, շաղ է տրվում աշխարհով մեկ: Այնտեղ, ուր իրավունք պիտի լինի, անօրինություն-արյունհեղություն է: Ուր որ արդարություն պիտի լինի, աղաղակ է: Աղաղակն էլ որ կա, արյան ձայնն է, զոհված արդարի արյան ձայնը: Տերյանը ոչ միայն չի ընդունում ջար աշխարհի բարքերը, նաեւ կռիվ է մղում, պատգամում է. «Սիրտդ որպես վառ ատրուշան պահիր վառ, /Ջար աշխարհի խավարի դեմ պահիր վառ»: Մարդու ուժեղ տեսակն է Տերյանի փնտրածը: Եւ երբ չի գտնում, չի տեսնում, հոգին հառաչում է. «Մի՞թե...»: Այս «միթեն» խորք ու ծալքեր չունի: Այն նախ վերաբերում է Հայաստանի լինել-չլինելուն: Լինել, բայց ինչպիսին: Նույն Տերյանը հառաչել է նաեւ. «Ոստիկանի Հայաստան հարկավոր չէ»: Տերյանն առաջ էր քաշում հոգեւոր Հայաստանի կայացման խնդիրը: Տերյանը վեր էր ամեն բանի ժամանակավորից, վեր էր, հեռու էր մեղքի ժամանակավոր զվարճությունից, երկրային կյանքի հարստության սին պատրանքից, բոլոր կարգի ցուցադրանքներից ու ձեւականություններից: «Մոդա» կոչվածը խորթ էր նրան:

Մեր աչքի առաջ, ցավոք, հայոց հոգեւոր կյանքը տեղի է տալիս. մեծահարուստ բարերարներ կան, բայց մանթաշովները գրեթե բացակայում են: Եկեղեցի կառուցողն անգամ, ավա՜ղ, հավատի մեջ չէ:

* * *

Տերյանն ուր որ գնում է, հոգով կապված է, ասես շղթաների մեջ լինի, եւ դա՝ այդ շղթա-տառապանքը, իր Լուսեղի համար է, իր հոգեւոր Հայաստանի համար:

Հոգու կապվածությունից է, որ նա գրում է. «Ես՝ կալանավոր արար աշխարհում, / Հովիվներն ազա՛տ հեռու սարերում»: Հոգին թեև երազում է հեռուն, բայց մարմնին չի թողնում, որ գնա այնտեղ, ուր ուզում է: Մարմնավոր Տերյանը հլու-հնազանդ է հոգեւոր Տերյանին: Երկուսն էլ այս աշխարհի մեջ են, աշխարհ, որտեղ մարդիկ «Զարին ասում են բարի եւ բարուն՝ չար ... խաւարը շինում են լոյս եւ լոյսը՝ խաւար ... դառնը քաղցր են շինում եւ քաղցրը՝ դառն: Վա՛յ նորանց, որ իրանց աչքին իմաստուն են եւ իրանց առաջը՝ գիտուն»: Չար աշխարհի խավարը ներթափանցող Տերյանը Սուրբ Հոգու ներգործությամբ գիտեր գալիքը. «Սեւ օրեր ես դեռ շատ կտեսնեմ»: Գիտեր, բայց շարունակում էր ընթանալ՝ կարծես այդ սեւ օրերին ընդառաջ գնալիս լիներ: Նա Աստծո մարդու նման ուրախությամբ կատարում էր իր կյանքի ընթացքը: Ես կյանք եմ ասում, բայց Տերյանի աչքին դա «մի լուսեղեն հեքիաթ էր»: Այս լուսեղենը, ասել եմ, աստվածայինն է: Մտքիս եկավ Իսահակյանի հիացական խոսքը, որ դարձյալ վերաբերում է կյանք-աշխարհին, կյանք-տիեզերքին. «Եւ ո՞վ է հյուսել հեքիաթն այս վսեմ»: Ահավասիկ, հարց, որ իր մեջ պատասխան էլ ունի. «Արարիչ Աստծո ձեռքի գործ է»: Տերյանը թե աշխարհիկ կյանքով ապրեր, մենակ չէր զգա ինքն իրեն. «Բյուր մարդոց մեջ, պաղ մարդոց մեջ, /Մենակություն, մենակություն»: Զգացումն աստվածային է, ճշմարտությունն՝ աստվածային: Ահա թե ինչ է ասում Մարդացյալ Աստված Հիսուս Քրիստոսը. «Դուք բոլորդ կգնաք եւ ինձ մենակ կթողնեք, բայց ես մենակ չեմ»: Տերյանը եւս մենակ չէր, երբ հեռու էր մարմնավորներից: Մենակ էր զգում, երբ շուրջը աշխարհիկ հոգսերով տարված, մտքով իրենք իրենց մարմնի մեջ թափառող մարդիկ էին: Հոգով անհաշտը երբեմն-երբեմն մարմնով հաշտության էր գալիս եւ չէր էլ թաքցնում երկրային կյանքի իր վիճակը. «Եւ ինչպես գերին հլու իր բեռին, /Տանում եմ կյանքիս օրերն անվրդով»: Կյանք-լուսեղեն-հեքիաթը, հարկավ, Վահան Տերյան հոգեւորինն է, Վահան Տերյան բանաստեղծական էությանն է պատկանում, պատկանում է նրա արվեստին, այսինքն՝ հոգու այն ընթացքին, որ տանում է աստվածհայտնության. «Թեթեւ էր արվեստն իմ ու խնդուն»: Սա հոգու կյանքն է, երազի հետ կապված աշխատանք-աշխարհը: Մինչդեռ նույն մարմնի մեջ ապրում է մեկ այլ Վահան Տերյան, որին նույնպես պիտի լսել ու հասկանալ. «Բայց կյանքս այնպես դժվարին էր»: Տերյան մարմնավորն, ինչ խոսք, կրակն էր ընկել Տերյան հոգեւորի ձեռքը: Մեկը տառապում ու նաեւ սարսափում էր մահից, մյուսը՝ տառապանքը բախտ էր համարում: Տառապանքն, անշուշտ, մարմինն ավերում էր, մինչդեռ հոգին՝ նորոգում: Որպես վկայություն՝ մեջբերեմ Ս. Օտարյանին գրած նամակից . «Թեեւ ֆիզիկապես խանգարված եմ վերջնականապես, բայց հոգեպես ամրապնդվել եմ ու հավատ եմ զգում իմ մեջ»: Այս հավատով այնքան նա գնաց դեպի նպատակը, մինչեւ որ մարմինը փուլ եկավ. «Ընկնում եմ»: Այս էր նրա վերջին խոսքը: Ասաց եւ ընկավ այնտեղ՝ հեռվում: Ինչպես կանխազգացել էր, այնպես էլ եղավ. «Ոչ ծաղիկ, ոչ սուգ»: Սուրբ Հոգին հայտնել էր. «Քո գերեզմանը հեռվում է լինելու»: Ինքն էլ հնազանդվել, հաշտվել էր. «Իմ գերեզմանը թող լինի հեռվում, Թող ինձ չհիշեն, թող ինձ մոռանան»: Նույն հոգով խոստովանել է. «Մոռացել եմ ես ամենքին»: Ինչ է, մարդատյացությո՞ն է սա: Բնավ: Հապա ինչ

է: Միմիայն մարդասիրություն: Սա վերադարձ է դեպի աստվածակերպ Մարդը, դեպի կատարյալը, դեպի էությամբ անեղծը: Սա աշխարհի ցավն ապրել է, ցավել է աշխարհի համար:

Վահան Տերյանը, աստվածաշնչյան լեզվով ասած, թեեւ պատվական անոթ էր Աստծո ձեռքին, բայց մարդկանցից քչերին էր ճանաչելի այնպես, ինչպես ինքն իր էությամբ կար: Նա իր անձը պատվական չէր էլ համարում, որպեսզի կատարյալ լիներ ընթացքը եւ կատարյալ մնային գործերը, որ բնույթով աստվածային էին: Եւ կյանքի այս գործելակերպը, հավիտենական ուրախության, ինչպես եւ հավատքի հնազանդության օրինակ է սերունդների համար, սուրբ փառապանքի մեջ բախտ ու բախտավորություն եւ, անշուշտ, հավիտենական կյանքի խորհուրդը տեսնելու օրինակ: Տերյանը ոչ միայն զգում, տեսնում, այլեւ ապրում է աստվածայինը: Տերյանի համար ստեղծագործելը, այսինքն՝ երկունքի պահ ապրելը, Աստծո ներկայության մեջ գալ է:

* * *

Հայտնապես գիտենք՝ Վահան Տերյան զավակն իր թափառ կյանքում, Երկիր Նաիրի տեսիլքի հաստատությունը տեսնելու երազով տարված, պատրաստ եղավ ոչ միայն փառապանքներ կրելու, այլեւ ինքն իրեն զոհելու: Նա իր բաժին երկրային կյանքը տեսավ զոհաբերության ընթացքի մեջ: Այս առումով, նրանը, Եղիշե պատմիչի խոսքով ասած՝ գիտակցված մահ էր: Նրան տրված էր դեպի սուրբ նպատակը մինչեւ վերջ գնալու աստվածային շնորհը. «Որքան մութը սեւ, այնքան ես համառ»:

Տերյանը վեր է ազգայինի աշխարհային սովորույթներից, աշխարհային ավանդույթներից, կողմ է ազգայինի արարչական ավանդույթներին, սովորույթներին: Ձեւական ոչ մի բանի չհետեւեց, չխառնվեց, չասաց էլ թե քանի տարվա քրիստոնյա է հայ ժողովուրդը: Թվերով չառաջնորդվեց, քանի որ քրիստոնյա լինելու, Քրիստոսի էությունը կրելու արմատականը տեսավ ժամանակի անհիշելիի մեջ: Չափի մեջ չէր Վահան Տերյան հոգին: Ինչպես ներկայի, այնպես էլ անցյալի եւ ապագայի անտեսանելիները տեսանելի եղան նրան: Ինչու՞ չէր շլանում հայ ժողովրդի անցյալի փառքով: Որովհետեւ նրա հայացքը միտված էր ապագային, շարունակ առաջ էր նայում եւ առաջ ընթանում: Բացի այդ, անցյալում, ասենք, նախնիքն իրենցն արել էին, ինչու՞ պիտի նրանց հերոսականը վերագրեր իրեն եւ շլանար, հրճվանք ապրեր: Այլ բան է նախնաց օրինակին հետեւելը: Երբ հետեւում ես նախնյաց բարի հայրենանվեր գործերի օրինակին, հետ նայելդ առաջընթացի արժեք է ստանում եւ նախնիներիդ տեսնում ես գալիք ճամփեքին, այսինքն՝ առջեւում ես տեսնում: Այնպես որ, Տերյանը խոնարհությունը դիտեց իբրեւ ազգի տեսակը պահելու եւ դեպի հավիտենություն ընթանալու միջոց: Ժողովրդի խոնարհության եւ սրբության մեջ տեսավ հավիտենության խորհուրդը: Մի կարգին տուն չունեցավ, միջոց չունեցավ մի հաստատուն ընտանիք կազմելու. «Մեզ կյանքը նետեց միմյանցից հեռու,/ Եւ մենք չուզեցինք մեկմեկու կանչել»: Թեեւ ասում է «չուզեցինք», բայց պիտի հասկանալ՝ չկարողացանք, չստացվեց: Նյութապես էլ ապահով չեղավ, որովհետեւ նա-

խընդրեց «նեղ դռնով անցնելը»: Սերունդներին ավանդեց ազգային սրբությունը, այսինքն՝ այն, ինչ ստացել էր նախնիներից: Ու ազգն էլ Աստծո կամոք իր նվիրյալ զավակին շնորհեց անուն, որ վեր է ամեն բանից: Այս անունն, անշուշտ, նույնացած է հայրենիքի անվան հետ: Այնպես որ, Տերյան ասելիս իսկույն դեմդ հառնում է հոգեւոր հայրենիք Հայաստանը: Նահիրին, որպես տեսիլ դյութական, աչքիդ առաջ է գալիս: Տերյան ասելիս Աստծո ստեղծած մարդ ես քեզ զգում:

* * *

Տերյանն ամեն ինչ տվեց: Բաշխելը նրա կյանքն էր, Աստծո խոնարհն եղավ.

«Ես խոնարհ եմ որպես հող»: Իմաստուն խոսք է. «Ով որ իր անձը բարձրացնե, կխոնարհվի եւ ով որ իր անձը խոնարհեցնե, կբարձրանա»:

* * *

Տերյանը թեեւ շարունակ ճամփորդության մեջ էր, գնում էր անկայան, անհանգրվան («Իմ ճամփան անվախճան մի գիշեր»), բայց մտքով շարունակ դառնում էր դեպի տուն. «Կարծես թե դարձել եմ ես տուն, Բոլորն առաջվանն է կրկին»: Առաջվանն է, որովհետեւ ինքը մնացել է նույն մանուկը, որի համար մայրը դեռեւս կա, ապրում է եւ մանկության աչքով տեսնում է մորը. «Նորից դու հին տեղը նստում, /Շարժում ես իլիկը մեր հին»: Չի ասում՝ շարժում ես իլիկը քո հին, այլ ասում է՝ իլիկը մեր հին: Սա, ի դեպ, մտածողության կերպ է, ահավասիկ, այլ օրինակներ. «Ինձ մեր սարերը տարեք», «Մեր տունը համր ու դատարկ է, /Մեր տունը որբ ու ավեր է», «Մեր գինին մեր արյունն է դա», «Տաճար է մեր երկիրը», «Մեզ չի հասկանա օտարերկրացին», «Մի՛ խառնեք մեզ », «Մեզ խաչ են, խաչ են հանում ամեն օր»: Կարող էր, չէ՞, ուղղակի գրել. «Ինձ խաչ են, խաչ են հանում ամեն օր»: Չէ՛, չի առանձնանում: Ինքն իրեն տեսնում է ամենքին միացած, ամենքի մեջ, ամենքի հետ: Թումանյանի հանգույն ասած՝ ամենքի չափ էլ տառապում է: Հիրավի, մտածողություն է, Էրզրումից է գալիս: Արյան կանչով է Տերյանը խոսում: Ջավախքի ժողովուրդը, ախալցխացիները եւ բոլոր նրանք, ովքեր ծագումով Էրզրումից են, «իմ»-ի փոխարեն, ասում են՝ «մեր»: Հայրը փղային մեկ այլ մարդու ներկայացնելիս սովորաբար ասում է. «Մեր մանչն է»: Այս մտածողությունը շատ ավելի հիմնավոր բացատրություն ունի, շատ ավելի խորքից է գալիս, ապրվածաշնչյան մտքի ակունքից: Երբ որ էրզրումցին ասում է «մեր», դրանով դիմացինին եղբայրացնում է իրեն: Ավելի պարզ ասած՝ դիմացինի մեջ եղբորն է տեսնում: Տերունական աղոթքը, տե՛ս, չի ասում՝ Հայր իմ, որ երկնքում ես, այլ ասում է. «Հայր մեր, որ երկնքում ես»:

Ախալցխացի եմ ծնունդով, մենք, օրինակ, երեխային դիտում ենք իբրեւ Աստծո տված, Աստծո նվեր: Ովքեր դեռեւս անխաթար են մնացել, իսկապես, ասում են. «Մեր երեխան է»:Այս արտահայտությունը, որ մտածողության ձեւ է, ներքին իմաստ ունի. «մեր տան զավակն է, մեր տոհմի, մեր ցեղի, մեր ազգի երեխան է»: Այս կերպ խոսքը, ինչպես եւ երեխան, բնութագիր են ստանում: Էրզրումյան մտածո-

ղությունը մոտ ու հարազատ է ասպվածայինին: Լուսահոգի Համո Սահյանը վկայել է. «Ազգի լույսը էնտեղից է, Էրզրումից»: Անշուշտ, նա նկատի ուներ Էրզրումից սերող զավակներին: Եւ այդ շարքում պատվավոր տեղերից մեկը Վահան Տերյանինն է: Լռած զանգի կյանքն ապրող Համո Սահյանի փակ լեզուն երբեմն բացողը Վահան Տերյան էությունն էր, Վահան Տերյան հոգին:

Քանի որ բուն մտքից հարկավոր «շեղում» եղավ, հարկ եմ համարում մեջբերել Համո Սահյանի մտորումները Տերյանի անձի եւ գործի շուրջ: Ի դեպ, սահյանական մեջբերումները պահի մեջ կատարած իմ գրառումներից են. «Թումանյանը, Իսահակյանը իրենց գործն արել էին: Նրանցից հետո Տերյան պիտի ծնվեր, որպեսզի ազգային զգացումները բարձրացներ համաշխարհային արվեստի մակարդակի: Նրանք հայ ժողովրդին ազգային ինքնաճանաչման բերին բուն ժողովրդական սյուժեներով, մոտիվներով, իսկ Տերյանն ընդհանրացրեց բարձր արվեստով: Տերյանը մորմոքի լույսը բերեց»:

Իմ այն հարցին, թե գալիք հավիտենությանը ո՞ւմ կուզեր հանդիպել, ո՞ւմ հետ կուզեր զրուցել կամ՝ ի՞նչ կուզեր հետը տանել, Համո Սահյանը պատասխանել է. «Հետս Տերյանի փոքրիկ ժողովածուն կտանեի: Թումանյանը ամենամեծն է: Թումանյանը շատ է օբյեկտիվ, պիտի երկար մտածես, որ քեզ ջերմացնի: Իսահակյանին եմ մոտենում՝ այրում է: Չարենցը՝ այդ երկուսը խառնած: Մեծ է, բայց ոչ մեկն է, ոչ էլ՝ մյուսը: Չարենցի մեջ շատ բանաստեղծներ կան: Անհատականությունը կա: «Մահվան տեսիլը» հերիք էր անմահանալու համար: Չարենցը հրաբուխ է, գործող հրաբուխ, խփում է, կրակը թափում վրեդ. չես հասցնում տեսնել: Առաջին տողից բանաստեղծական մթնոլորտը կա: Մարդկայն ի՞նչ երեւույթ է, ազգային ինչ երեւույթ: Ինքն իրեն տանում է ողջակիզման: Հայրենիք ասածը Չարենցի եւ նրա նման զոհերի անունն է:

Նարեկացին ծանր կլիներ ինձ համար: Վարուժանը՝ ծանր կլիներ:

Մեծարենցն էլ է հոյակապ, բայց Տերյան կտանեի: Եւ դա թերեւս բացատրելու բան չէ: Տերյանի հետ կզրուցեի:Տերյանը, ասում ես, ի՞նչ էր անելու, եթե ապրեր: Այն, ինչ արել էր մինչեւ ... Այն էր անելու, ինչ անում է: Ցավալիորեն կարճ տեւեց Տերյանի կյանքը, բայց ստեղծագործական ճանապարհը մշուշից հասավ մինչեւ Հայոց աշխարհի լուսեղեն ոլորտը, մինչեւ բիբլիական Արարատի սլացքը, մինչեւ անհայտը հավիտենության: Նա մեզ սովորեցնելու էր ոչ թե օգտվել կոչման ընձեռած արտոնություններից, այլ ճաշակել գրողի ստեղծագործական անքնությունը: Նա մեզ թույլ չէր տա մեր ուսերին իբրեւ բեռ տանել թվացյալ հարստությունն ու մեծությունը: Մեր տագնապած մոլորակի եւ տագնապած աշխարհի հեգսերը կուզենար տեսնել այդ ուսերի վրա: Նա մեզ կսովորեցներ անմնացորդ հատուցել մեր ստեղծագործական ու քաղաքացիական պարտքերն այնպես, որ ամեն պարտքի հատուցումը լիներ նոր պարտքերի հրամայական:

Նա մեզ կսովորեցներ այրվելով ապրել եւ մեռնել այրվելով:

Նա մեզ կսովորեցներ, որ մեր արքայական, մեր ոսկեղենիկ լեզվի բառերի հետ երբեք տուն-տուն չխաղանք, որ ժամանակի շիկացած բովերի վրա սիսեռի հատիկների պես չաղանձենք այդ բառերը, այլ պահենք, ինչպես հողի մարդը՝ փնջած սերմ-

նացուն: Կսովորեցներ այնպես անել, որ բառը բառին մերձենա ոչ թե մի պապահական թիթեղյա փուփի ու ծառից ընկած մի որբեւայի փերեւի պես, այլ սիրահարված աղավնիների կրուցների նման: Վերջապես նա մեզ կսովորեցներ հարգել եւ սրբագործել մեր լեզուն:

Ասպվածացրի, որ քեզ աղոթեմ,

Հրամայեցի, որ վրաս իշխես:

Տե՛ս, է՛, հրամայեցի, որ վրաս իշխես: Եւ դրանից հետո մի էնպիսի հարթություն է գալիս մեր պոեզիային, որ չես կարող հաշտվել: Մտքի հարթություն է Տերյանից հետո: Ո՞նց հաշտվես: Տերյանի տողի մեջ խնդիր կա: Հրաման տալու համար նախ մարդն ինքը մեծ իշխանություն պիտի ունենա: Շշմելու է. «Նա չուներ խոցող թովչանքը կնոջ»: Տե՛ս, ինչ կա տողի մեջ: Գիրք կա՝ էսքան բան չկա մեջը: «Լուսե՛ղ, քեզ եմ երազում»: Ո՞նց թարգմանես, ասենք, թեկուզ ռուսերեն: Նրանց «Սվետլին» ածական է, Տերյանինը՝ զոյական: Տերյանի ակնարկած «արքայական լեզուն» գրաբարն է :

Ասում էին կապ չունի Տերյանի պոեզիան Ջավախքի բնության հետ:

Առաջին անգամ Ջավախք որ մտա, Տերյանի հոտն զգացի՝ արձակ դաշտեր, մերկ սարեր ...: «Մի՞թե վերջին պոետն եմ ես»: Ճիշտ էս, Հարություն, մեծը օր առաջ հառաչում է: Էդ հառաչանքի մեջ էսօրվա մեր զգացողությունը կա. Հայաստանը կլինի՞ արդյոք ... Ճիշտ ես նկատել. «ավերված երազ հայրենական տուն» հառաչը Էրզրումից է գալիս: Էրզրումը, ասել եմ, ակունքն է ազգային մտքի, ոչ միայն պոեզիայի, ամեն ինչի, նաեւ լեզվի ու լեզվամտածողության: Հիրավի, էդ էնտեղի տունն է, բայց երեւի նմանություն կա Էրզրումի ու Ջավախքի: Միանգամայն ճիշտ է, տարագիրը միշտ էլ ծննդավայրին նման վայր է ընտրում: Հիմի ես ուրիշ բան եմ մտածում. «Ավերված երազը» կամ էլ «Փշրված երազը» միջնադարում չկա, մինչեւ Տերյանը չի եղել: Մտածողության ձեւ է, որին ինքը հասել է: Էլ չեմ խոսում «Ես տառապանքս բախտ եմ համարում» խոստովանության մասին: Սա էնպիսի մեծ բան է, որին մենք չենք հասել»:

* * *

Շարունակ վերադարձող Տերյանը կարծես մարմնով էլ է հասնում այնտեղ, որտեղ որ միտքը հասել է, կարծես մարմնով էլ է հաստատվում այնտեղ, ուր հոգին հավիտենապես հաստատված է: Ջավախքը, անշուշտ, առանցքն է, միջուկն է Ջավախքը: Ջավախքը սրբություն սրբոց մտնելու նախադուռն է: Անհիշելիի խորքից եկող, մշուշի միջից հայտնվող Նաիրին եւս, որ նրա եւ մեր հոգու հայրենիքն է, հայրենիքի երկնավորը, հայոց Ավետյացը, Ջավախքով է անցնում: Եթե Էրզրում գնալու լինես, պիտի անցնես Ջավախքով:

* * *

Մարմնով հեռանում, գնում էր աշխարհի ճամփեքով, հոգով վերադառնում

գուն: Մարմնի ճամփան ծրարված էր մշուշով, հոգու ճամփան՝ օծված արեւով: Մեկը լույսի մեջ էր, մյուսը՝ խավարի. «Ես մոռացել եմ արեւի ուղին ... /Ինձ ո՞վ է մատնել այս մառախուղին»: Արեւի ուղին հայրենիք գանողն էր: Տրտմում էր. «Ես անջատվել եմ հայրենի հողից»: «Թողի հայրենի տնակս ավեր»: Իր կորստյան գիտակցությունն ուներ, բայց եւ գնում էր, գնում ու գազնապում. «Արդյոք կա՞ վերադարձ»: Գնում եւ խոստովանում էր. «Իմ անվերջ կյանքի գազնապից հոգնած...»: Եւ վերջապես բարձրաձայնում աղերսագին.

Հոգնեցի գրքերից անհամար,
Աշխարհից այս խավար ինձ գարեք,
Ինձ գարեք այս երկրից անարեգ:

Խոսողը նույն Տերյանն է. «Ես մոռացել եմ արեւի ուղին»: Արեւի ուղին անցնում է ոչ թե երկնքով, այլ պարզապես, ասացի, պայմանավորված է նաեւ Ջավախքով.

Ինձ գարեք մեր սարերը պայծառ,
Մեր սարերն անառիկ, վեհանիստ,
Մեր արտերն արեւոտ ու հանգիստ:

Սա միայն խաղաղության ծարավ չէ, սա երկրավոր, սոսկ մարմնավոր բաղձանք չէ: Սա վերադարձի բաղձանք է ոչ միայն դեպի ծննդավայրն ու մանկության վայրերը, այլեւ դեպի մաքրամաքուրը, դեպի սրբությունը, դեպի աստվածայինը: Սա հաստատումն է այն բանի, որ աշխարհը խաղաղություն չունի: Աշխարհինը խավարն է, Աստծունը՝ լույսը: Ուրեմն, սա խավարից դեպի լույսն ընթանալու բաղձանք է: Գիրքը, որ Աստծուց չէ, ի վերջո ձանձրույթ պատճառելուց բացի, մատնում է կորստյան: Սուրբ Հոգու ներշնչմամբ ասված խոսք է, որ հնչում է Պողոս առաքյալի շուրթերով. «Աստծո հիմարն ավելի իմաստուն է, քան թե մարդիկ: Աստծո տկարն ավելի զորավար է, քան թե մարդիկ»: Մարդիկ որ ասում է, նկատի ունի նրանց, ովքեր իրենք իրենց աչքին խելացի են երեւում, թեեւ գիտական աստիճաններ էլ ձեռք բերած լինեն, իրականում մարմնի մեջ մտքով թափառողներ են: Տերյանը, այս վաղանցուկից վաղ գնացած Տերյանը, մեր առջեւ սրբությամբ եւ ճշգրտությամբ պարզում է այն աշխարհը, որը զգացել, տեսել, ընկալել, ընդունել էր մինչեւ տասներկու տարեկանը: Երկար, շատ երկար ու շատ խոր ափսոսաց. «Մանկուց ընտրեցի ճամփորդական ցուպ, /Թողի հայրենի տնակս ավեր»: Այնպես որ, նրա վերադարձի փափագը որքան մարմնավոր, նույնքան էլ հոգեւոր է.

Փրկեցեք մտքերից այս անծայր,
Փրկեցեք խոսքերից այս խելոք,
Դարձրեք ինձ մանուկ եւ անհոգ:

Այս «անծայր մտքերը», այս «խելոք խոսքերը» բնութագիրն են աշխարհի կերպի: Սարերի սերը, որ հատուկ է Տերյանին, անշուշտ, նրա աստվածային բնույթից է բխում: Մարդկային՝ թվացյալ իմաստուն եւ խելոք, բայց կյանքից զուրկ խոսքերից նա անցնում է խոսքի հավիտենականին, որ կենդանի Աստծո վկայությունը բերող կենդանի, անխաթար ու անեղծ բնությունն է.

Փրկեցեք սրերից այս սուրսայր,

Խորախոց խոհերից իմաստուն ...
Մեր սարերը փարեք, փարեք փուն ...

Անշուշտ, խոսողն էությամբ այն նույն երեխան է, այն նույն Գիքորը, որ «անիրավ աշխարհից», այն է՝ մահվան ճիրաններից, ազատվել եւ փուն գնալ է ուզում:

* * *

Տերյան մանուկը, ինչ խոսք, երազի աշխարհում է, իսկ երազը երազ էլ մնալու է: Տերյան էության կոչումը երազելը չէր, նրա կոչման հիմքում անձնազոհությունն էր, որպես մի նոր կյանքի եւ որպես հարության,այսինքն,մահվան դեմ փարած հաղթանակի նշան:

Մանուկ Տերյանը՝ մանուկ, բանաստեղծ Տերյանը՝ բանաստեղծ, մարդ Տերյանը՝ մարդ, հոգի Տերյանը՝ հոգի, բայց կար եւ մեկը, որ նույնպես էություն էր, Ասփծո հետ ուխտի մեջ մտած էություն: Ոչ մի բան նրան հետ պահել չէր կարող: Այլոց համար չեղածը նրա համար եղած էր: Այլոց չտեսածը, չլսածը տեսնում, լսում էր նա: Նրանում աներեւույթ բանի հաստատությունը կար.

Իջնում է գիշերն անգութ ու մթին,
Եւ այգը բացվում դառն ու մահահոտ,
Բայց հրկեզ հոգիս մորմոքում այս փոթ
Հավատում է դեռ քո առավոտին:

Թող կիտվի խավարն ավելի խրթին
Եւ չարխինդ ճնշե հողն իմ արյունոտ,
Ու թող գա՛, թե կա, ավելի՛ չար բոթ,
Մեխվի զոհ-երկրիս անարգված սրտին:

Ուխտավոր անդուլ, դարերի ժառանգ
Մի հեգ նահրցի՝ գնում եմ անկանգ,-
Թող գուժկան գիշերն անհաստատ դավե-
Որքան մութը սեւ այնքան ես համառ,
Երկնի՛ր, իմ երկիր, հավատով անմար,
Սուրբ է քո ուղին եւ պսակդ՝ վեհ ...

Այս է, որի մասին ասել եմ՝ վեր է, քան բանաստեղծությունը, քան ստեղծագործություն կոչվածը: Եւ Տերյանն էլ ավելին է, քան բանաստեղծը: Սա հավատի շարժում է, հավատի ընթացք եւ ոչ թե, ասենք, մտքի ու բանականության. պարզապես գրվում է, ինչպես Տերյանն ինքը վկայել է իր նամակներից մեկում: Ե՞րբ է գրվում, այսինքն՝ ե՞րբ է խոսքը վեր մսի եւ արյան պտուղ լինելուց: Երբ որ ներգործում-թելադրում է հոգին, որ սուրբ է: Սերն ու սրբությունը բառ-խոսքից վերածվել են մարմնի, կենդանություն են ստացել եւ ապրում են հավիտենական կյանքով:

Հիրավի, այս կերպ մարմնանում է սրբությունը, այս կերպ մարմնանում է հա-

վապը, այս կերպ մարմնանում է այրվող ու այրող սերը: Ո՞րտեղ է այս մարմնացումը: Անձի՞ մեջ, թե՞ ազգի: Իսկ ինչ է, ազգը անձ չէ՞: Ազգը հոգի եւ մարմին չէ՞: Մեկը մյուսով չէ՞, միմյանց մեջ չե՞ն, մի չե՞ն: Իհարկե, մի են: Այն, որ գրում է «Մի՛ խառնեք մեզ ձեր վայրի, արջի ցեղերին», խոսքը վերաբերում է ազգի մաքրությանը, խոսքը վերաբերում է ասպվածային անեղծ բնության մեջ մնալուն: Խառնվել նշանակում է դադարել փաճար լինելուց: Դադարել փաճար լինելուց, նշանակում է սրբությունը կորցնել, այն է՝ կորցնել Աստծո Հոգին, որ Սուրբ է: Երբ որ կառույցը փաճար չէ, այդ կառույցի քարն էլ է կորցնում իր ասպվածային բնույթը, այլեւս չես կարող ասել. «Սուրբ է ամեն քար»: Խոսքը, անշուշտ, հայ մարդուն է վերաբերում եւ ոչ թե, ասենք, քարին: Ի դեպ, «քար» բառ-գոյականը եւս հայերենում ասպվածաշնչյան իր մեկնությունն ունի: Քարը եւս վկայում է Քրիստոսին, վկայում է նրա արարչագործ ու նաեւ՝ արքա լինելը: Կարծում եմ՝ «ք» տառը Քրիստոսի խորհուրդն է կրում, իսկ «ար»-ը վկայում է Քրիստոսի արարչագործ- արքա լինելը: Քար, ասել է թե՝ Քրիստոս-Արարիչ-Արքա, Քրիստոսն Արարիչ է, Արքա, Քրիստոսն է Արարիչը, Արքան. Երուսաղեմ մուտք գործող Հիսուսին ամբոխն ընդունում է ցնծությամբ, որպես Արքայի: Եւ երբ ամբոխն անկառավարելի է դառնում, դիմում են Հիսուսին, որպեսզի հանդարտեցնի... Հիսուսը պատասխանում է. «Եթե սրանք լռեն, քարերը պիտի աղաղակեն»: Իսկ ինչ են աղաղակելու: «Քրիստոսն արարիչ է, Արքա»: Այնպես որ, «քար»-ը վկայություն է՝ ասպվածային խորհրդով:

Այն մաքուրը, այն ասպվածայինը, որ տեսնում ենք Վահան Տերյան զավակի մեջ, ազգային ժառանգություն է, որ մի սերնդից անցնում է մյուսին: Հոգու աչքով նայելիս Վահան Տերյանով ու նրա բանաստեղծությամբ մենք, իբրեւ ժողովուրդ, մեր մեջ կտեսնենք Քրիստոս ճառագայթը: Տերյան կարդալով՝ հաղորդակցությունը կունենանք Քրիստոսի էության: Ավելին, կտեսնենք Քրիստոսը մեր մեջ, մենք՝ Քրիստոսի: Զավակի էության մեջ կտեսնենք ժողովրդին, ժողովրդի էության մեջ՝ Աստծուն: Հայ ժողովրդին դառնալիս, Տերյանը հանդես է բերում իրեն հատուկ սկզբունք. «Ես էլ դու եմ, ես չկամ»:

Վահան Տերյան զավակն Աստծո շնորհներով, Աստծո խոսքի խորհրդով գալիս է դեպի իր ժողովուրդը եւ միաժամանակ ժողովրդի խոնարհ էությամբ հաղորդակից դառնում ասպվածայինին: Վերը հիշատակածս բանաստեղծության մեջ միաձույլ են ազգայինն ու ասպվածայինը:

Այն, ինչ զավակի մեջ է, ազգինն է: Իսկ այն, ինչ հատուկ է ազգին, Աստծունն է: Այս սուրբ միասնությամբ է Տերյանի թե՛ անվան եւ թե՛ նրա խոսքի անմահությունը: Վահան Տերյան անունը սրբացած էություն է մեզ համար ու մեր մեջ, սրբացած է նաեւ նրա բանաստեղծություն-խոսքը, որ ապրում, գործում է որպես չարից հեռացած հոգի: Այս կերպ է Վահան Տերյան հանճարը:

Ինչ խոսք, այս աշխարհի շնչավորները եւս իրենց մեծերն ունեն, այսինքն՝ ունեն մեծ շնչի բանաստեղծներ: Ո՞րն է տարբերությունը: Հոգու դասին պատկանողները, թեեւ այս աշխարհում են, բայց այս աշխարհից չեն, մինչդեռ շնչի դասին պատկանողները թե՛ աշխարհում են եւ թե՛ աշխարհից:

Բնականաբար, աշխարհը շնչավոր մեծերին շատ ավելի լավ է ճանաչում, քանի որ իրենից են: Մինչդեռ հոգեւոր մեծերը մնում են առեղծված, երբեմն էլ անքննելի, անբացատրելի: Օրինակ՝ Նարեկացին, Սայաթ-Նովան, Թումանյանը, Կոմիտասը, Ջիվանին, Տերյանը իրենց ապրվածային խորհուրդներով շնչավորների համար դեռեւս մնում են առեղծված:

Տերյանի հայրը՝ Տեր Սուքիասը, լինելով քահանա, ծառայում էր եկեղեցում, Վահան Տերյան զավակը, սակայն, նույն երկյուղածությամբ իբրեւ խաչ բռնում է գրիչը, որի զորությունը նույնպես Աստծուց է: Խաչ. ասել է՝ խորհուրդն Աստծո չարչարանաց: Տերյանի եկեղեցին ժողովուրդն է, որ անձեռակերտ է: Տերյանը ոչ միայն բանաստեղծությամբ, այլեւ իր անձով է պատարագ մատուցում, այն է՝ գնում է ինքնազոհության: Տերյանի պատարագը սրտերի մեջ է, հոգիների մեջ: «Ու թող գա՛, թե կա, ավելի՛ չար բոթ, /Մեխվի զոհ-երկրիս անարգված սրտին»: Մարդկային մտքի իմաստություն կա՞ այստեղ: Բնավ: Խոսքը վարպետությամբ ասելու ճիգեր եւս չկան: Երբ որ կարդում եմ «Մեխվի զոհ-երկրիս», իսկույն պատկերանում է խաչյալ Քրիստոսը: Քրիստոսին հալածող աշխարհը, բնականաբար, հալածելու էր նաեւ հետեւորդներին, նրանց, ովքեր նույնացած են էությամբ, ովքեր իրենց մեջ կրում են, ապրում Քրիստոս-կյանքը: «Զոհ երկիր» որ ասում է, Հայաստանն է: Կերպարանակից լինել Քրիստոսին, նշանակում է լինել նաեւ չարչարանակից: Չարչարանակից լինելն էլ հարության է տանում՝ որպես նշան մահվան դեմ տարած հաղթանակի: Այնպես որ, հայ ժողովրդի լինելությունը կապված է Քրիստոս- կյանք-էությունը կրելու հետ: Ավելի պարզ ասած՝ Աստծո հետ ուխտի մեջ է հայ ժողովուրդը: Լսելի է, ահա, Աստծո խոսքը. «Ես՝ քեզ Աստված, դու՝ ինձ ժողովուրդ»: Այս ուխտին հավատարիմ մնալով է երկիր-հող-ժողովուրդը՝ որպես Աստծո մարմին, սրբանում. «Տաճար է մեր երկիրը»: Տերյանը բանաստեղծական զեղման մեջ չէ եւ ոչ էլ մարդկային մտքի իմաստությամբ խոսում է: Բան կա, որ մարդուն հայտնում է մարդու հոգին, կա բան, որ նույն այդ մարդուն հայտնում է հոգի-ապրվածայինը, որ Սուրբ է: Տերյանն ինքը նամակներից մեկում խոստովանում է, որ իր բանաստեղծությունները «գրվում են» եւ ոչ թե ինքն է գրում: Իրենը գրիչ բռնելն է, իրենը թելադրանքը անխաթար հանձնելն է: Ինչ է ստացվում: Ստացվում է, որ մարդկային շուրթերով խոսում է Աստված:

* * *

Հիսուս Քրիստոս Խաչի վրա էլ շարունակում է իր առաքելությունը. «Հայր, ներիր սրանց, որովհետեւ չեն գիտակցում, թե ինչ են անում»: Տերյանի տառապանքը սերում է ապրվածային այս սիրուց: Եւ քանի որ լույսի մեջ է, նա տեսնում է իր սրտին իջած, ծանրացած սեւ բծերը: Մեղքի գիտակցումը նրան զղջման է բերում. «Մի ուխտ եմ թողել անկատար»: Սրանից էլ ծնվում է «Անմխիթար, անսպառ վհատության հեկեկանքը»: Երկու կարծիք լինել չի կարող. Տերյանը պարզ տեսնում է թե՛ իր անձի եւ թե՛ իր ազգի առաջ ծառացած վտանգը: Այս վտանգն էլ մեկ այլ բան չէ, եթե ոչ աշխարհի կերպին գերվելը: Տերյանի նպատակը ոչ թե աշխարհի կեր-

պից փախչելն է միայն, ոչ միայն աշխարհի կերպը ժխտելն է, այլեւ՝ փոխելը: Նա ոչ առանձնանում է իր ժողովրդից եւ ոչ էլ իրեն արտոնության մեջ դնում: Խոստովանում էլ է. «Ես խոնարհ եմ որպես հող»: Նպատակը դիմացինին, հատակում հայտնվածին բարձրացնելն է: Ավելին, հուսահատվածին, ձեռքը թափ տվածին, նույնիսկ իր վրա քար նետողին եղբայր է կոչում: Այս ու այսպես է Վահան Տերյան զավակի քրիստոնեությունը: Թվով ու գրով չէ, թիվը՝ չոր, անհոգի, գիրը՝ սպանող: Թիվն ու գիրը, թերեւս ավելին չեն, քան, ասենք, հիշողությունը: Հիշելը մի բան է, կենսակեպ դարձնելը՝ մեկ այլ բան: Ամեն անգամ, երբ կարդում եմ «Երկնի՛ր, իմ երկիր, հավատով անմար»-ը, մանավանդ երբ հնչում է Տերյանի «Երկիր իմ, երկունքի ծով» արտահայտությունը, դարերի խորքից, ինչպես մշուշից, հայտնվում է Վահագնի ծնունդը, որի մեջ, ըստ Համո Սահյանի, պատկերված է աշխարհի սկիզբը. հրահեղուկ վիճակից դուրս է գալիս ոգին.

Երկնէր երկին, երկնէր երկիր,
Երկնէր եւ ծովն ծիրանի,
Երկն ի ծովուն ունէր եւ զկարմրիկն եղեգնիկ:
Ընդ եղեգան փող ծուխ ելանէր,
Ընդ եղեգան փող բոց ելանէր,
Եւ ի բոցոյն վազէր խարտեաշ պատանեկիկ:

Նա հուր հեր ունէր,
Բոց ուներ մօրուս,
Եւ աչքունքն էին արեգակունք:

Այս ու այսպես է հայ ժողովրդի նախաքրիստոնեական հիմքը:

Տերյանի բառը, միտք-մտածողությունը, ինֆորմացիայից բացի, հայտնություն է, որ վերաբերում է ինչպես մարմնին, այնպես էլ հոգուն: Տերյանին այցելած տիեզերական միտքը մեզ հայտնի դարձած ժամանակների սահմաններից այն կողմ է տանում: Միտք, որ հոգու օրենքներով է գործում, այսինքն՝ ոչ տարիք եւ ոչ էլ սահման է ճանաչում: Տերյանն, ուրեմն, որքան հայացքով ապագայինն է, նույնքան եւ անցյալինը: Այս անցյալ կոչվածն էլ նույն հավիտենությունն է: Այն, որ հավիտենության հետ է առնչվում, մշտարթուն, մշտատեւ ներկայություն է.

Թող կիտվի խավարն ավելի խրթին,
Եւ չարխինդ ճնշե հողն իմ արյունոտ...

Պիտի վկայել, այսօր եւս «Կիտվում է խավարն ավելի խրթին»: Արյուն տեսած մեր հողը, մեր սուրբ տաճար Հող-Հայաստանը, «չարխինդ» ճնշվում է: Այս «Չարխինդն» ինձ հիշեցնում է նրա մեկ այլ վկայություն. «Մի չար արեւ է այրել երկիրը, /Ողբի նման են բոլոր երգերս»: Ավա՛ղ, այսօր ցավն ավելի խոր է, որովհետեւ մեր երգերը ոչ թե սիրուց բխող ողբի նման են, այլ պարզապես սնամեջ են երբեմն, երբեմն անմիտ ու անհոգի: Այսօրվա երգերը կարծես մեռելածին երեխաներ լինեն: Երկիրն այրողը նույն այն «չար արեւն» է, բայց արի տես, չարին բարի կոչողներ են հայտնվել, Տերյանի բառերով ասած՝ հայտնվել են «Արյունոտ խնջույքի ինքնակոչ թամադաներ»:

Լեզվամտածողության կորուստը, անշուշտ, կորուսն է նույն այդ լեզվի, իսկ լեզվի կորուստը պատճառ է հոգեկորստի: Լեզուն, որ հոգեւոր տաճար է, փրկության դուռ ունի: «Անդարձ կորել է սրտիս խնդումը», «Ես մոռացել եմ արեւի ուղին», «Ինձ ո՞վ է մատնել այս մառախուղին»: Սրանք զղջման եւ խոստովանության խոսքեր են, որ կապված են Աստծո ուխտի հետ. «Մի ուխտ եմ թողել անկատար»:

Երբ կարդում եմ «Թող զուժկան գիշերն անհաստատ դավե» տողը, հոգեւին հայտնվում եմ Գեթսեմանի այգում, ուր տեղի է ունենում Քրիստոսի ձերբակալությունը: Այնպես որ, իմ խոր համոզմամբ, այս «զուժկան գիշերը» Հիսուսի մատնությունն է խորհրդանշում: Այս գիշերվա խավարը մարդկային հոգիների մեջ պիտի տեսնել: Այս գիշերն ասպղեր չունի, կյանքեր չունի: Դավադրություն կա այս գիշերվա մեջ, զույժ կա, մատնություն կա, մոտալուտ մահվան տագնապ կա. «Մահն է արդյոք, թե՞ նինջը քեզ /Պատել պայծառ Նաիրի»: Ահավասիկ, մի կողմում՝ հոգու կորստաբեր խավարը, մյուս կողմում՝պայծառ Նաիրին:

Միտքը, որ տիեզերքինն է, այցելում է թե՛ մեկին եւ թե՛ մյուսին: Մոտեցում-մտածողություններն են տարբեր: Չարենցն, օրինակ, գրում է. «Ես եկել եմ դարերից ու գնում եմ հաղթական Դեպի դարերը նորից, դեպի պայծառ ապագան»: Նույն միտքը Տերյանին հայտնվում է մեկ այլ կերպով. «Ուխտավոր անդուլ, դարերի ժառանգ, /Մի հեգ Նաիրցի՝ գնում եմ անկանգ»: Խոսողը դարձյալ անձն է, բայց ընթացքը ազգինն է: Երկու զավակ եւ երկու հայացք ապագային: Մեկը մտքի զորությամբ է, մյուսը՝ հոգու: Մի դեպքում հոգին մտքի մեջ է, մյուս դեպքում՝ միտքը հոգու մեջ: Երկուսն էլ ճամփորդ են, մեկը՝ մարդկայինի սահմաններում, մյուսը՝ աստվածայինի: Երկուսն էլ մշակ են. մեկը՝ սոսկ ազգի դաշտի, մյուսը՝ միաժամանակ Աստծո դաշտի: Մեկը պիտի հուսա ինքն իր ուժերին, մյուսը՝ աստվածային զորությանը. «Որքան մութը սեւ, այնքան ես համառ», այսինքն՝ չարի ու բարու, հավատի եւ անհավատության, արդարության եւ անօրենության կռիվը շարունակվում է: Չարենցն այնքան մեծ է, որ տեսնում եւ խոստովանում է իրենց միջեւ ընկած հոգեւոր տարածքը. «Օ՜, հեռու ընկեր իմ, Օ՜, Վահան Տերյան»: Երկուսն էլ գրեթե միեւնույն բառամթերքով են, մեկն ասում է. «Ես եկել եմ դարերից ու գնում եմ հաղթական», մյուսը՝ «Ուխտավոր անդուլ, դարերի ժառանգ»: Տերյանն ինքն իրեն տեսնում է որպես «Մի հեգ նաիրցի», որպես ուխտավոր, որպես դեպի աստվածայինն ու խոնարհաբար դեպի Աստված ընթացող: Տերյանն «անցյալի փառքով շլանալու» խնդիր չունի: Նման արտահայտություն իսկ չունի: Երկուսն էլ մեծ են, հանճար են, մեկը՝ այսպես, մյուսը՝ այնպես:

Թե՛ Չարենցը, թե՛ Տերյանը գրեթե միեւնույն ժամանակի մեջ են, միեւնույն աշխարհքում: Թռիչքի մեջ են, այն տարբերությամբ միայն, որ Տերյանը տեսնում, առանձնացնում է ժառանգության հավիտենականը, որ Աստծուց է: «Ուխտավոր անդուլ». հոգեւոր այս բնութագրմամբ եղանակը փոխվում է: Մի բառ եւ, Թումանյանի ասած, մի աշխարհ: Տերյանը, որ քաջածանոթ էր աշխարհի գրական գրեթե բոլոր գանձերին, որ անձնական կապերի մեջ էր ժամանակի գրական, քաղաքական գործիչների հետ, որ սովորել էր Մոսկվայի եւ Պետերբուրգի բարձրագույն ուսումնական հաստատություններում, որպես բանաստեղծ՝ չառաջնորդվեց ո՛չ ձեռք բերած գիտությամբ եւ ո՛չ էլ մարդկային իմաստությամբ: Աշխարհի մեջ եւ մանա-

վանդ արվեստում, որն իր իսկ բնութագրմամբ «թեթեւ էր ու խնդում», առաջնորդվեց ապրվածաշնչյան հոգով: Նրա հայրը՝ Տեր Սուքիասը, ի պատասխան Մոսկվայի Լազարյան ճեմարանի տնօրինության հարցման, պատասխանում է, որ ի թիվս այլ բաների՝ երեխան գիտե Հին եւ Նոր Կտակարանները: Ասածո խոսքի այն սերմերը, որ ընկան տակավին մանուկ Տերյանի հոգում, ժամանակի ընթացքում ծլարձակեցին եւ հոգեւոր քաղցր պտուղներ տվին:

Տերյանը, թերեւս, միայն մարմնով էր այս աշխարհում, աշխարհ, որի ուղիները «մութ ու դաժան» էին, մինչդեռ հոգով նա մեկ այլ աշխարհում էր: Մարմնով մի տեղ էր, ասենք, քաղաքական դաշտում, մինչդեռ հոգով, «հրկեզ հոգով», շարունակ մեկ այլ ճամփի վրա էր, մեկ այլ ընթացքի մեջ. «Ուխտավոր անդուլ, դարերի ժառանգ, / Մի հեզ նահրցի՝ գնում եմ անկանգ»: Չէ՛, Տերյանն ինքն իրենից չի խոսում, ինքն իրեն չի վերագրում անքննելին: Տերյանը որքան մոտ, նույնքան հեռու է: Այս ճշմարտությունը, ասացի, պահի մեջ խոստովանել է Չարենցը: Տերյանի նկատմամբ չարենցյան ակնածանքը սրբացման է հասնում: Որպես մասունք, որպես երկնքից երկիր իջած սրբություն է դիտում Տերյանի ձեռագրերը, որոնք պահելիս է եղել դարակում ... Տերյանի ձեռագրերը լույս են ճառագել, դրանք Չարենցը համեմատել է ծագող Արեւի հետ: Տեսնես ի՞նչ եղավ ապրվածային այդ սերը, այդ սեր-միաբանի կապը, այդ ժառանգություն-հավիտենականը: Այսօրվա ազատ ու անկախ հռչակված Հայաստանում արդյոք կա՞ն գոնե երկուսը, որ նման սիրով նայեն ու տեսնեն իրար: Ինչպե՞ս չհիշել Չարենցի մարգարեականը. «...Որ վերջին մեր սերն է գուցե»: Ինչպե՞ս չապրել Տերյանի տագնապը. «Մի՞թե վերջին պոետն եմ ես /Վերջին երգիչն իմ երկրի»:

Տերյանի ու Չարենցի ունեցած տագնապը Համո Սահյանով էլ է հայտնվում. «Հայաստան ասելիս ծնկներս ծալվում են»: Վահագն Դավթյանն իր հերթին, դիմելով Սահյանին, գրում է.

Ես չգիտեմ, մեզնից ո՞վ պիտի հեռանա
Դեպի եզերքն անհայտի, ուր տառապանքն է լռում,
Բայց մեզնից մեկը, գիտեմ, պիտի կրկին որբանա
Ես՝ աշխարհում իմ կորած, դու՝ քո կորչող աշխարհում:

Ազգի մեջ լինել-չլինելու հարց–հարցականը եղել է, կա եւ դեռ լինելու է: Ինչո՞ւ: Որովհետեւ ազգի միասնությունը, ցավոք, ոչ թե հավատով ու սիրով է, այլ դրսից թելադրված քաղաքականությամբ եւ գաղափարախոսությամբ: Գաղափարը, որ ծնվող եւ մեռնող երեւույթ է, ոչ թե միավորում է, այլ՝ բաժանում խմբերի ու խմբակցությունների, որոնց հավաքական անունը կուսակցություն է:

Հայոց մշակույթը բնույթով քրիստոնեական է, պատմությունը՝ նույնպես: Այնպես որ, այսօրվա կուսակցությունները չարիք են հայ ժողովրդի համար: Ամեն մեկն իր խոսնակ թերթն ունի, ամեն մեկն իր «հայերենով» է մտածում, խոսում, գործում: Մինչդեռ հայոց լեզուն մեկն է, միասնական է իր էությամբ: «Եւ հնչում է որպես աղոթք արքայական քո լեզուն»: Երբ որ աղոթքի լեզվով, աղոթքի հայերենով մտածենք, խոսենք, գրենք ու գործենք, անկասկած, կվերանան բոլոր կարգի տարաձայնություններն ու տագնապները: Բառը սերմ է: Անեծքի լեզվով խոսես՝ անեծք

ցանած կլինես, բուսածն էլ, անշուշտ, անեծք է լինելու: Լեզվի մեջ եղած օրհներգի հոգով պիտի առաջնորդվել: Չկա փրկության մեկ այլ միջոց, մեկ այլ ճանապարհ: Սրբությունը, որ ժառանգել ենք, պարտավոր ենք փոխանցել սերունդներին: Ահա այս է խնդիրը: Ազատություն ասածդ բնավ էլ ամենուր չէ եւ ոչ էլ ամեն բանի մեջ է: Մարդ մարմնավորի ասածի՞ն հավատալ, թե՞ Ասծո խոսքին. «Որտեղ Ասծո հոգին, այնտեղ՝ ազատություն»:

Քրիստոնեությունը սոսկ կրոն պիտի չդիտել: Քրիստոնեությունը երկնային գիտություն է, կենսակերպ է, վարք ու վարքագիծ: Քրիստոնեությունը Քրիստոսի էությունն է, Քրիստոս-կյանքը:

Քանի դեռ մարմնավոր ենք, մարմնից ծնված, դատապարտված ենք կորստյան, հոգեւորը, հոգուց ծնվածն է կոչված հավիտենական կյանքի: Աչքի տեսածով ենք առաջնորդվում. ինչպե՞ս կարող ենք կատարյալ կյանք ունենալ: Մարմնի ցանկության հետեւից ենք գնում. ինչպե՞ս կարող ենք բաղձալի հանգրվանի հասնել: Գնում ենք, բայց ո՞ր, դեպի հավիտենությո՞ւն, թե՞ դեպի գերեզման: Մարմնավոր մտածողության տեր մարդու հավաքածն ի՞նչ է, իհարկե՝ գերեզմանի պաշար: Նայում ենք սրտի՞ն, թե՞ դեմքին ու դիրքին: Մենք, ավա՛ղ, դաղարում ենք մեր հարազատին ճանաչելուց ...

Ասենք, թե այսինչ թվականին ընդունել ես քրիստոնեությունը իբրեւ պետական կրոն: Հետո՞: Կրոնը պետականացա՞ծ ես տեսնում, թե՞ հայոց պետությունը քրիստոնեացած: Ապուպապդ, ասենք, ընդունել է քրիստոնեությունը, դու ի՞նչ ունես, ի՞նչ բաժին: Մի՛ ասա այն, ինչ ունես, այլ ունեցի՛ր այն, ինչ ասում ես: Շուրթի՞դ է ասածդ, թե՞ սրտիդ մեջ: Կյա՞նք է, թե՞ ընդամենը փաստի հիշատակում, խոսք: Տերյանն, ահա, հայ ժողովրդի քրիստոնեից էությունն է պարզում. «Դու յոթնապատիկ խոցված Տիրամայր», «Մեզ խաչ են, խաչ են հանում ամեն օր», «Ու թող գա, թե կա, ավելի՛ չար բոթ, /Մեխվի զոհ երկրիս անարգված սրտին»: Տերյանը բերում է Աներեւույթը, Անտեսանելին: Աներեւույթն է կյանքի հարատեւության երաշխիքը եւ ոչ թե երեւացողը: Քրիստոնեից հոգին պիտի կրել, հավատը պիտի ունենալ եւ ոչ թե միայն գաղափարը, որի դրսեւորումը ծես է ու ծիսակատարություն: Ոչ թե խաչը՝ մարմնով, այլ Խաչյալը սրտի մեջ կրողն է քրիստոնյան : «Հայր, ներիր սրանց, որովհետեւ չեն գիտակցում, թե ինչ են անում»: Այս է քրիստոնեության կատարելության աստիճանը. ներել, համբերել, հավատարիմ ու հնազանդ մնալ, սիրել մինչեւ վերջ: Այս նույն հոգով Թումանյանը գրում է.

Երազումս մի մաքի
Մոտս եկավ հարցմունքի,
Ասված պահի քո որդուն,
Ո՞նց էր համը իմ ձագի:

Հ. Սահյանն հենց այնպես չէր ասում. «Թումանյանի մեջ եղած բարությունը կարող է մի ողջ ազգ պահել լույսի մեջ»: Ազգի ճշմարիտ զավակն իրենով, բնականաբար, ազգ է ներկայացնում: Զարենցն, օրինակ, ոչ թե սոսկ Տերյան երեւույթը, Տերյան անձն է սիրում, այլ նրանով կապվում է հայ ժողովրդի էությանը: Երբ գրում է. «Ես ի՞նչ անեմ, որ մնա ծիածանը երեքգույն, /Որ չցնդի, չմարի իմ հոգու հեռուն»,

հայ ժողովրդի հոգու հետ միաձույլ է: Չարենցի ասած հոգու հեռուն հայ ժողովրդի ասպվածային ծագմանն ու բնույթին է վերաբերում: Ազատության եւ անկախության ծարավով է սա գրում: Առանց ասպվածայինի, առանց Աստծո հոգու, կատարյալ ազատություն եւ անկախություն լինել չի կարող: Անկախությունն էլ իր ասպվածային անսխալական օրենքներն ունի. երկնային մարմիններն անկախ չեն, երկրի վրա այս կամ այն ազգն ինչպե՞ս կարող է անկախ լինել: Անկախությունը հոգեւոր երեւույթ է եւ ոչ թե մարմնավոր: Խեղճը չի կարող անկախ լինել, մինչդեռ խոնարհը կարող է: Խեղճությունը տանում է անկման, խոնարհությունը՝ թռիչքի եւ փրկության: Հաղթանակը կայանում է հավատով եւ հնազանդությամբ: Հնազանդություն ոչ թե մարմնի ցանկությանը, այլ՝ Հոգու թելադրանքին:

Դառնամ վերն արծարծած մտքիս. Չարենցի հոգու հեռուն, հարկավ, առնչություն ունի Աստծո հոգու հետ, որ սուրբ է: Չարենցի մտքի ընթացքը դեպի սրբասուրբն է. «Որ չցնդի, չմարի իմ հոգու հեռուն»: Չարենց էությունը զգում-տեսնում է իր ժողովրդի եւ Աստծո միջեւ ի սկզբանե եղած կապը: Չարենցը տագնապում է. չլինի՞ կտրվի այդ կապը... Այն որ գրում է. «Ես ի՞նչ անեմ, որ մնա ծիածանը երեքգույն», տեղավորվում է նաեւ գույնի հայկական եռագույն ընկալման մեջ. ազգային մեր դրոշի երեք գույները ասպվածային շնորհներ են եւ Աստծո էությունն են խորհրդանշում: Լուսամփոփի պես աղջիկը հայ ժողովրդի երկվորյակը չէ՞ արդյոք. «Թոքախտավոր, թափանցիկ, մարմնի՛ պես երազի»: Ուշադիր պիտի լինել. լուսամփոփի պես աղջիկը Ասպվածամոր աչքերով է. «Լուսամփոփի պես աղջիկ, ասպվածամոր աչքերով»: Ըստ Աստծո խոսքի՝ աչքը մարմնի ճրագն է, աչքը մարդու էության, մարդու մեջ եղած Աներեւույթի հայելին է: Չարենցի մտածողությունն ասպվածաշնչյան է: Ըստ Աստծո խոսքի՝ աղջիկը, նույն ինքը հարսը, խորհրդանշում է ժողովուրդ, որ Աստծունն է: «Սիոնի դուստր» ասպվածաշնչյան արտահայտությունը խորհրդանշում է եկեղեցին, այսինքն՝ Աստծուն եկած ժողովուրդը: Նոր կտակարանում «Հարսը» նույնպես ժողովուրդն է, հարս, որի «փեսան», այսինքն՝ գլուխ-գլխավորը, Քրիստոսն է: Չարենցի «Լուսամփոփի պես աղջիկ»-ը եւ Ջիվանու «Ով սիրուն, սիրուն»-ը ասպվածաշնչյան միեւնույն խորհրդով են: Խուսափելով ժամանակի խավար հոգիներից, արտահայտման ասպվածաշնչյան կերպն են ընտրել, մի բան, որին հասու չեն այս աշխարհի կորածները: «Կգա ժամանակ, քիչ էլ սպասե»: Երկու կարծիք լինել չի կարող, ազգի հետ է խոսում: Սայաթ-Նովան էլ, կրելով միեւնույն էությունը, Սուրբ Հոգու հետ հաղորդակից է, երբ որ երգում է. «Դուն կըրակ, հազածըդ կըրակ»:

Ինչ վերաբերում է Վահան Տերյանին, ոչ միայն մտածողությամբ ասպվածաշնչյան է, ոչ միայն ասպվածաշունչ լեզու-արքայականով է խոսում, այլեւ հայ ժողովրդի կենսակերպի մարմնավորմամբ, վկայում է Մարդացյալ Ասպված Հիսուս Քրիստոսին. «Մեզ խաչ են, խաչ են հանում ամեն օր»: Ո՞ւմ են խաչ հանում. ով որ կրում է Խաչյալի էությունը, այսինքն՝ ով որ Քրիստոս կյանքն ապրում է: Այնպես որ, հայ ժողովրդի լինելությունը, հայ ժողովրդի, ինչպես ընդունված է ասել, մոխիրներից հառնելը, պայմանավորված է Քրիստոսի էությունը կրելու եւ Քրիստոսին կերպարանակից ու չարչարանակից լինելու հետ: Ժողովուրդը, որ մոր էության հավաքականն է, խաչված է Տիրամոր նմանությամբ. «Դու յոթնապատիկ խոցված

Տիրամայր»: Ահավասիկ, Տերյանն իր ժողովրդի էությունը ձուլված է տեսնում Աստվածամոր էությանը: Չարենցը միեւնույն հոգով նույն բանն ասում է մեկ այլ կերպ. «Լուսամփոփի պես աղջիկ, աստվածամոր աչքերով»: Երկուսն էլ առաջնորդվում, գործում են միեւնույն հոգով, երկուսի տեսածն էլ աստվածային բնույթ-բնությունն է, որ հատուկ է հայ ժողովրդին: Պատահական չէ՝ Տերյանն էլ, Չարենցն էլ փնտրում են Նաիրին. երկրում ծնված զավակները երկնայինի տեսիլքն ունեն, այն երկնայինի, որ եղել է ու կա երկրի վրա: Չարենցը գրում է «Որ չցնդի, չմարի իմ հոգու հեռուն»: Տերյանը տեսնում է այդ նույն հոգու հեռուն. «Մշուշի միջից-տեսիլ դյութական, բացվում է կրկին Նաիրին տրտում»: Իր եւ հոգու հեռվի տեսիլքն ապրող Չարենցն է, որ հարցնում է, պատասխան փնտրում. «Ի՞նչ է, ի՞նչ է Նաիրին ... մի՞թ է, հոգու ցնո՞ղք»:

Պատահական չէ նաեւ, որ Տերյանը եւ Չարենցը գրեթե հավասարապես փորձել են պարզել հայոց լեզվի բնույթն ու էությունը: Զգացել, գիտակցել են, որ մեր լեզուն կրում է մեր հավիտենության խորհուրդը: Համո Սահյանն եւս մտավ մտքի այս տիեզերականի մեջ. «Մեր լեզուն մենք ենք որ կանք»: Այնպես որ, մեր լեզվի աղավաղումը մեր մարմնի եւ հոգու աղավաղում է: Մեր լեզվի աղավաղումով, մեր լեզվի ուրացմամբ մենք մեր Աստծուն ենք կորցնում, աստվածայինն ենք աղավաղում: Մեր լեզուն՝ Աստծո պարգեւ հայերենը, աստվածաշնչյան արժեք ունի: Այնպես որ, Մաշտոցով հայ ժողովրդին ոչ միայն գիրն է հայտնվում, այլեւ կերպավորվում է հոգին, անտեսանելին տեսանելի է դառնում, անմարմինը մարմին է հագնում: Նարեկացու Մատյանն, օրինակ, թեեւ «Մատեան ողբերգութեան» է կոչվում, իրականում «Մատեան աստվածաշնչեան» է, այսինքն՝ համարժեք է Աստվածաշնչին: Այս բանն այլք էլ են ասել, բայց ինձ հայտնի եղավ մեր լեզվի հայտնությամբ: Ամեն ազգի լեզվով չես կարող Աստվածաշունչ մատյան ստեղծել: Լեզուն ձի է, հայը ունի Քուռկիկ Ջալալին: Թուր-Կեծակին եւ Քուռկիկ Ջալալին թեեւ ջոկ-ջոկ են, բայց միեւնույն բնույթն են կրում, հաղթանակը կայանում է այս երկուսի միասնությամբ: Քուռկիկ Ջալալին ճանաչում է իր հեծյալին, հեծյալ, որի ձեռքին Թուր-Կեծակին է: Ճիշտ այդպես, Աստծո լեզուն ճանաչում է Աստծո մարդուն: Հայոց ասծվածաշնորհ լեզուն ի սկզբանե ճանաչել է Աստծո շնորհը կրող Մաշտոցին, Սահակ Պարթեւին, Խորենացուն, Եղիշեին, այնուհետեւ Ներսես Շնորհալուն, Նարեկացուն, Սայաթ Նովային, Կոմիտասին, Թումանյանին, Ջիվանուն, Տերյանին: Հայոց սահմանադրությունը՝ անփոփոխն ու անփոխարինելին, հայոց լեզվի մեջ է: Հիշատակածս հեղինակները հայ հոգու տարեգիրներ են: Այդ նրանք են մշակել Երկիր Նաիրիի սահմանադրությունը, մնում է, որ մենք ի զորու լինենք ընկալելու եւ գործադրելու: Զարմանալի չէ. ոչ միայն ոգին, այլեւ հոգին էլ ազգություն ունի: Հոգին, ասել եմ, արյունն է, որ կա: Հոգին արյան մեջ այնպես է, ինչպես, ասենք, բույրը ծաղկաթերթերում: Քանի որ հայի արյունը տարբերվում է գենով, հոգին էլ, որ այդ արյան մեջ է, տարբեր է: Ինչպես որ երկու մարդ արյան բաղադրությամբ նույնը չեն, այդպես էլ նույնը չեն հոգեկերտվածքով:

Գրողն իր օրենքներով եւ իր բնույթով թե՛ իշխանություն է եւ թե՛ պետություն: Ազգի ճշմարիտ գրողի գործերում ոչ միայն ազգի բարոյական նորմերն են, այլեւ, ասացի, սահմանադրությունը: Թումանյանը, Ջիվանին, Տերյանը, եթե հոգու աչքով

նայենք, օրենսդիրներ են:

Սահմանադրությունը չարի եւ բարու միջեւ սահման դնելն է, չարը եւ բարին զանազանելու միջոց: Սահմանադրությունը յուրովի հաստատումն է բարու, հիմնավորումն է ճշմարտության:

Վահան Տերյանի հայերենով, այսինքն՝ այն լեզվով, որով մտածում, խոսում, գրում է նա, ճանաչելի է դառնում հայ ժողովուրդն իր էությամբ: Ավելի պարզ ասած՝ հայ ժողովրդի ծագումը եւ հայոց լեզվի ծագումը, անկասկած, աղերսներ ունեն, գալիս են միեւնույն ակունքից, ակունք, որ աստվածային է: Տերյանն աստվածային է այնքանով, որքանով կրում է հայ ժողովրդի էությունը: Տերյանի աստվածաշնչյան մտածողությունը սկիզբ է առնում նրա ծննդյան օրից, ավելի ճիշտ՝ նրա արյան գեների մեջ է: Վահան Տերյանը հոգեւոր էր դեռեւս իր Յուղաբեր մոր որովայնում գտնվելիս: Մայրը, որ ծառայակից էր իր քահանա ամուսնուն, հոգեւոր կյանքով էր ապրում. խունկ էր ծխում, մոմ վառում, աղոթում էր, կանգնում պատարագի: Այս ամենին հաղորդակից-մասնակից էր նաեւ լույս աշխարհ գալուն սպասող մանուկը: Ձեռքերը երկինք պարզած մոր հետ երկինք էր ձգվում, դեպի երկինք էր նայում նաեւ մանուկը: Մանկան նայելը, բնականաբար, մարմնի աչքով չէր: Երկնքի դուռը, որ բացվում էր աղոթքով, լույս էր ճառագում դեռեւս մոր մարմնի խավարում գտնվող մանկան էության մեջ: Աղոթքով հայտնված ճառագայթն անցնում էր մոր եւ մանկան միջով: Ես ասացի ճառագայթ, դու հասկացիր բան, որ Աստծուց է: Աստծո մարդ Մովսեսի հետ կապված արտահայտություն ունի Հիսուսը. «Դուք բոլորդ աստվածներ եք»: Սա չի նշանակում, թե մարդը մարդուն Աստծո տեղ պիտի դնի: Մարդն աստված է այնքանով, որքանով Աստծունն է: Մեկը, որ Քրիստոսինն է, ուրեմն, Քրիստոսի էությունն էլ կրում է: Մոր աղոթքով մանկանն անցած ճառագայթը ոչ այլ ինչ է, եթե ոչ Քրիստոս-էություն: Այնպես որ, Քրիստոս էության դրսեւորումն է Վահան Տերյան զավակի կյանք «լուսեղեն հեքիաթը»: Տերյանի կյանք-լուսեղենը, կյանք-հեքիաթայինը, անկասկած, կյանք-աստվածայինն է: Այն, որ Տերյանն իրեն մանուկ է զգում, մտքի, մարմնի, էության ընթացք է դեպի աստվածայինը: Աստծո մանուկը, այսինքն՝ մարդ-անաղարտը, մարդ-մանուկ-մաքուրը միայն կարող է Աստծո ներկայությունից զրկվելն զգալ. «Մենք բոլորս, բոլորս մանուկներ ենք որբ, /Մանուկներ ենք մենք կորած»:

Վահան Տերյան թե՛ մարդը եւ թե՛ բանաստեղծը, շարունակ շարժման մեջ գտնվելով, շարունակ անցնելով երկրային կյանքի կայանից կայան, շարունակ էլ փափագում է վերադառնալ. «Ո՞վ կտանի մեզ տուն»: Հարցնողն իրեն տակավին մանուկ, այն էլ որբ ու կորած մանուկ, մանուկ հոգի զգացող Տերյանն է: Աշխարհի գրքերից, աշխարհի տված խոսք-խելք-գիտությունից, աշխարհի կերպ-կործանարարից հոգնած Տերյանը, Տերյան ուսումնառուն, մասնավորապես Տերյան մարդը, կանխազգալով, տեսնելով գալիքը, ուղղակի աղերսում է. «Ինձ մեր սարերը տարեք, /Ինձ տարեք տուն»: Երկուսն էլ՝ Տերյան մարդը եւ բանաստեղծը, Տերյան հոգի-հոգեւորն, մարդ-մարմնավորը, ձգտում են դեպի սկիզբը, դեպի անխաթարը, դեպի աստվածայինը: Ձգտումը ոչ միայն հանգիստ գտնելու, այլեւ ազատության մեջ հայտնվելու համար է: Այս երկիր-աշխարհը, քանի որ արդարությամբ չի առաջ-

նորդվում, ո՛չ հանգիստ կարող է տալ եւ ո՛չ էլ ազատություն. «Իմ կալանավոր արար աշխարհում»:

Սարերը սրբության մարմնավորումներ են, սրբություն, որ կենդանի Աստծո հոգով է: Տերյանի ակնարկած տունը («Ո՞վ կտանի մեզ տուն») ակնարկ է երկնային արքայության: Երկնքի այն դռները, որ բացվել-պարզվել են Յուղաբեր մոր աղոթքով, երբեք չեն փակվելու: Ինչո՞ւ: Որովհետեւ մոր աղոթքը շարունակում է զավակը. «Օրհնված եք դուք, երկինք, գետ ու արտ»: Այս օրհնությամբ է նաեւ Վահան Տերյան անուն-էություն-հավիտենությունը:

* * *

Եւ քանի որ մարմնով չէր կարող տուն գնալ, մտքով ու հոգով էր թռչում, հասնում երազ- երազածին. «Կարծես թե դարձել եմ ես տուն, /Բոլորն առաջվանն է կրկին»: Կարծես մարմինն էլ էր տանում այնտեղ, ուր հոգին հավիտենապես հաստատված էր:

Երկփեղկված կյանք որ ասում են, Տերյանինն է. մարմնով մի տեղ, ասենք, անհասկանալի Մոսկվայում, հոգով՝ մեկ այլ տեղ, որ հաստատուն է: Այս հաստատունը նրա ծննդավայր Ջավախքն է: Մարմնավոր Տերյանը մարմնով գնում էր աշխարհի ճամփեքով, հոգով վերադառնում: Իր իսկ սրտում էլ արձակող կարոտ-խոսքերը ասես հայրենի Ջավախքից հնչելիս լինեն. «Երբ կհոգնես, կգազազես աշխարհից, /Դարձիր իմ մոտ, վերադարձիր դու նորից»: Դիմացինի ցավն էլ իրենն էր համարում, իրենը եւ Ջավախքինը: Չէ՛, ցավից դուրս Տերյան չկա, ինչպես որ չկա սիրուց դուրս Տերյան: Տերյանական էություն դարձած ցավն ու սերը նույնացած են այնպես, ինչպես, ասենք, աչքն իր բիբով: Առանց բիբի աչք կլինի՞, աչքի լույս կլինի՞: Չի լինի: Այդպես էլ առանց ցաված սրտի («Ցաված սիրտս չի կամենալ քեզ տանջել») Տերյան չի լինի: Այս ցաված սիրտը, ասել եմ, նույն սիրող սիրտն է:

Տերյանն այնքան անկեղծ է, որքան մորն ու հորը կանչող երեխան: Այս երեխան, այս անմեղը, այս մաքուրը շարունակ ապրում ու ձայն է արձակում նրա էության մեջ: Նրա էության ծալքերում ապրող երեխան ասես շարունակ թախանձելիս լինի. «Ինձ մեր սարերը տարեք, /Ինձ տարեք տուն»: Տերյանն այնքան էր ձուլված իր մոր էությանը, որ խոսում էր մոր մտքով ու ձայնով. «Վանիկս կորավ»: Այսպես մտածեց ու սրտի խորքում խոսեց Յուղաբեր մայրը, երբ որ իր 12 տարեկան Վանիկ-Վանոյին Թիֆլիս էր տանում Տեր-Սուքիասը: Վանիկը Յուղաբերի համար նույն Գիքորն էր, որի մայրը նույնպես չէր ուզում, որ իր «քորփա երեխին էն անիրավ աշխարհը գցեն»: Ի դեպ, Թումանյանի Գիքորն էլ էր 12 տարեկան: Գիքորը եւ Վանիկը նույն էություններն են՝ միայն մեկ տարբերությամբ. Գիքոր գյուղացին ապրվածային անմեղության մեջ էր, Վանիկը՝ Աստծո խոսքի: Հայրը, որ շարունակ դիմում էր Մոսկվայի Լազարյան ճեմարանի ղեկավարությանը՝ որդուն որդեգիր ընդունելու, ի պատասխան նրանց հարցմանը, վերն ասացի, գրում է, որ որդին հայերեն եւ ռուսերեն վարժ գրել-կարդալուց բացի, գիտե Հին եւ Նոր Կտակարանները, գիտե կրոնի պատմությունը: Այնպես որ, տակավին երեխա Վահան Տերյանը, որին Վանիկ էին կանչում, աշխարհ մտնելիս հաղորդակից էր Աստծո խոսքին: Պատահական չէ, որ վկայում է. «Արդա-

րություն չկա երկրում», «Մի չար արեւ է այրել երկիրը»: Տերյանի մեջ շարժվողը Աստծո հավատն է, գործողը՝ Աստծո հոգին: Եւ այն կանչը, որ հնչում է նրա մեջ էություն դարձած Ջավախք աշխարհից, նույնպես աստվածային է: Կանչողը երեխան է, Ջավախքում ծնված, ապրած, Աստծո աշխարհը տեսած երեխան, կանչը լսողը նույնպես երեխան է, նույն երեխան, որին իր ներսում շարունակ կրում է աշխարհի ճամփեքով անցնող բանաստեղծը: Նա ինքն իրեն տեսնում է այնպես, ինչպես ժամանակին տեսել է մայրը, ինքն իրեն նայում է իր իսկ մոր աչքով: Բանաստեղծին մի կողմ թողած՝ տեսնում է իր էության խորքում ապրող երեխային. «Մանուկներ ենք մենք

կորած աշխարհում անմայր»: Բանաստեղծ եւ պետական գործիչ Վահան Տերյանն իրեն երբեմն զգում է որբ, ինչպես պատի տակ կուչ եկած երեխա: Ինքն իր մեջ ապրող մանկան ձայնով ասես կանչելիս լինի. «Վանի՛կ, Վանո՛, Վանի՛կ, Վանո՛, Վանի՛կ, Վանո՛»: Այս կանչ-աստվածա+յինը հնչել է, հնչում է եւ հնչելու է հավիտյան. «Կարծես թե դարձել եմ ես տուն, /Բոլորն առաջվանն է կրկին»:

Ահավասիկ, այս կարոտ-կանչն էր, որ մարմին առավ, դարձավ բանաստեղծություն՝ իբրեւ էություն-անուն, իբրեւ պատգամ եւ իբրեւ հավիտենական կյանքի խոսք:

* * *

Տերյանի կանչն, անշուշտ, ոչ միայն վերադարձի փափագով է, ոչ միայն կարոտ ու սեր ունի իր մեջ, այլեւ լի է անհանգստությամբ: Հենց այդպես՝ սրտի տագնապով, արցունքով ու նաեւ տրտմությամբ է գրում: Առաջին հայացքից (մարմնական մտածողության պարագային) հուսահատության նշաններ կթվան այս երկերը: Մինչդեռ նա, ով հոգով ազատ է եւ ի զորու է հոգեւորը հոգով քննելու, այս ամենի մեջ տեսնում է սեր, որ աստվածային է: Վահան Տերյան զավակի թե՛ սրտի տագնապը, թե՛ անթաքույց արցունքը եւ թե՛ մահու չափ տրտմությունը բխումն են այն սիրո, որ նա ունի հայրենիք Հայաստանի եւ հայ ժողովրդի հանդեպ:

Մինչեւ երկրային կյանքի ավարտը Վահան Տերյան զավակն ապրեց, շնչեց Հայաստանով, որի անունը Երկիր Նաիրի էր: Անցյալով եմ ասում, որովհետեւ այն դեռեւս երազ է մեզ համար: